№ 140 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 30 ՅՈՒՆԻՍԻ 1910 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 30 ՅՈՒՆԻՍԻ № 140

ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Խմբագրատան տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱԿԻՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». TIFLIS, Rédaction «MSCHAK».

ՅՈՒԼԻՍԻ 1-Ից ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 6 ՌՈՒԲԼԻ

12 ամսվ.՝ 10 ռ., 6 և 7 ամսվ. 6 ռ., ամսակ. 1 ռ. Ամերիկա՝ տարեկան 6 դոլլար, Եւրոպա՝ 32 ֆր., Պարսկաստան՝ 10 ռ., Թիւրքիա՝ 120 ղրուշ։ Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցեն, նոյնպէս և 40 կոպ. (կարելի է և նամակագրոշմով)։

Յայտարարութիւնների համար վճարում են. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին 20 կոպ., վերջին երեսի վրա՝ 10 կոպ.։ Կովկասից դուրս յայտարարութիւնները ընդունվում են բացառապէս Торг. Домъ „Л. и Э. Метцль и К°“ ֆիրմայի միջոցով Մոսկվայում, Պետերբուրգում և Վարշավայում։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

„Մշակի“ խմբագրութիւնը յիշեցնում է այն բաժանորդներին, որոնք վճարել են 5-ական ռուբլի, շտապել ուղարկել մնացորդ 5 ռուբլին, որպեսզի յուլիսի 1-ից չրագրի առաքման գործում ընդհատում տեղի չունենայ։

Զաւակներ Բողդանովնա, Բողդան Գասպարովիչ, Թագուհի Գասպարովնա Գասպարեանցները և Աննա Գասպարովնա Անանեանցը՝ զաւակներով՝ խորին վշտով յայտնում են ազգականներին և ծանօթներին՝ առաջինն իր թանգագին և անժամանց տալոջ-որդու, իսկ վերջիններն իրանց հօրաքրոջ-որդու՝

Մովսէս Մկրտումեան ԹԱՒԱԴԵԱՆՑԻ

մահը։ Պատարագի և հոգեհանգստի արարողութիւնը մարմնի վրա այսօր, չորեքշաբթի, յունիսի 30-ին, առաւօտեան ժամը 11-ին, Վանք իսայր-եկեղեցում, իսկ թաղումը Խոջիվանքի գերեզմանատանը։ 792 1—1

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ Կիսլովոդսկում վախճանված բանկի դիրեկտոր

Մովսէս Մկրտումեան ԹԱՒԱԴԵԱՆՑԻ

թաղումը տեղի կունենայ այսօր, չորեքշաբթի, յունիսի 30-ին, Խոջիվանքի գերեզմանատանը։ Արարողութիւնը մարմնի վրա այսօր՝ Վանքի մայր-եկեղեցում, առաւօտեան ժամը 11-ին։ 791. 2—2

ՎԵՀԱՓԱՌԸ ՓՈԽԱՐՔԱՅԻ ՄՕՏ

—

Երէկ, յունիսի 29-ին, Վեհափառ Կաթողիկոսը տեսակցեց Կովկասի Փոխարքայի հետ Մցխէթում։

Վեհափառը՝ ուղեկցութեամբ Թիֆլիսի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Սաթունեանի, Մեսրոպ եպիսկոպոս Տէր-Մովսիսեանի, դիւանապետ Բագրատ վարդապետ Վարդապետեանի և Իր գաւազանակիր Մեսրոպ վարդապետ Նշանեանի՝ առաւօտեան ժամը 12-ին ուղևորվեց Փոխարքայի կողմից նշանակված երկաթուղու յատուկ գնացքով դէպի Մցխէթ։

Իշնելով Մցխէթ կայարանում՝ Վեհափառը աւտոմօբիլով ուղևորվեց դէպի Փոխարքայի բնակարանը։

Փոխարքայ կոմս Ի. Վորոնցով-Դաշկով կոմսուհի Ելիսավետա Անդրէեվնայի և Իր ամբողջ ընտանիքի անդամների հետ ընդունեցին Վեհափառին առանձին սիրալիր ողջագուրանքով։

Փոխարքան, հրաւիրելով Վեհափառին իր առանձնասենեակը, ունեցաւ նրա հետ երկարատև խօսակցութիւն։

Թարգմանն էր Մեսրոպ եպիսկոպոս Տէր-Մովսիսեան։

Անմուտեան Վեհափառը իր շքախմբով հրաւիրվեց նախաճաշի, որտեղ կոմսուհին, իբրև տանտիկին, ցոյց տուեց սիրալիր հիւրասիրութիւն։

Նախաճաշից յետոյ տեղի ունեցաւ զրոյց։

Վեհափառը Փոխարքայի երկու ադիւտանտների ուղեկցութեամբ այցելեց Մցխէթի վրաց հինաւուրց տաճարը և գիւղի հայոց եկեղեցին։ Մցխէթի տաճարում հանդամանօրէն բացատրութիւններ էր տալիս տաճարի աւագ-երէցը։

Այնուհետև Վեհափառը թողեց Մցխէթը և վերադարձաւ Թիֆլիս ժամը 5½-ին երեկոյեան։

ԱՆՀԱՄԲԵՐՈՂՈՒԹԵԱՆ ԴԷՄ

—

Մեր ընթերցողները գիտեն, որ վերջին շաբաթները Անգլիայում մի խաղող հարց էր դարձել Թագաւորի երդման բանաձևերի նոր խմբագրութիւնը։

Գլխաւորապէս ուշադրութիւն էր գրաւել մի կէտ, որ վերաբերում էր կաթոլիկութեան։ Այդ կէտը կազմված էր բացասական և վիրաւորական իմաստով կաթոլիկութեան վերաբերութեամբ։

Պատմական այն ժամանակները, երբ մշակվել էր երդման բանաձևը, Անգլիան սուր ընդհարումների մէջ էր Հռոմի պապի հետ և բողոքականութիւնը մաքառում էր կաթոլիկութեան յաւակնութիւնների դէմ։ Անգլիական եկեղեցին, ամրանալով վերջնականապէս բրիտանական երկրում, խմբագրել էր անգլիական թագաւորի համար երդման մի բանաձև, որի մէջ կաթոլիկական վարդապետութեանը վերագրված էին մնոտիապաշտութեան և կռապաշտութեան յատկութիւններ։

Եթէ սուր պայքարի ժամանակ մի այդպիսի խմբագրութիւն մտել էր երդման բնագրի մէջ, իբրև անգլիական եկեղեցու յաղթութեան մի արտայայտութիւն և նշան, փոքր ինչ ժամանակ անցնելուց յետոյ նա, այդ բանաձևը, դառնում էր վիրաւորական անգլիական ժողովրդի այն մասի համար, որը չէր յարել բողոքական եկեղեցուն և մնացել էր հաւատարիմ կաթոլիկութեանը։

Եւ վաղուց լսվում էին բողոքներ երդման բնագրի այդ կէտի դէմ։ Իրլանդացիները և անգլիական ցամաքի ուրիշ կաթոլիկները մեծ դժգոհութիւն էին ցոյց տալիս այդ կէտի վերաբերութեամբ և նոյն իսկ անգլիական արքայական տան անդամները իրանց անախորժ զգութեան մէջ էին զգում իրանց կաթոլիկ քաղաքացիների վերաբերութեամբ։

Մի քանի անգամ քննութեան սեղանի վրա էր դրվել երդման բնագրի փոփոխութեան խնդիրը, բայց միայն այժմ աջողվեց տալ նրան ընթացք և դնել քուէարկութեան։

Փոխվեցին և Անգլիայում մարդիկ, թէև սակաւաթիւ քանակով, որոնք պնդում էին թողնել անփոփոխ երդման բնագիրը, համարելով նրան պատմական մի աւանդութիւն և չունեցող իրական նշանակութիւն գործնական կեանքում, բայց հասարակական կարծիքը որոշակի պահանջ դրեց դէն գցել վիրաւորական նախադասութիւնները և դրանով ջնջել առ միշտ հետքերը մի այնպիսի բանաձևի, որը խախտում էր համբերողութեան սկզբունքը և վիրաւորում անգլիական քաղաքացիների մի նշանաւոր մասի սկզբունքները։

Եւ ահա, երբ համայնքների ժողովի քուէարկութեան ներկայացրեց Ասկվիտը երդման նոր բանաձևը, որտեղ դէն էին գցված կաթոլիկութեան վերաբերեալ բառերը, ջախջախիչ մեծամասնութեամբ՝ 383 ձայնով ընդդէմ 42-ի անցաւ նոր մշակված բնագիրը։

Թէև անգլիական թագաւորի երդումը, նաև երդման բնագիրը առանձին գործնական նշանակութիւն չունէին անգլիական կեանքի ընթացքի վրա, բայց հասարակական կարծիքը զգում է իրան շատ բաւարարված և միխիթարված, որովհետև անհամբերողութեան և միջնադարեան թշնամութիւնների ամեն մի յիշեցում ծնում է անախորժ զգացմունքներ և ժամանակակից քաղաքացին ցանկանում է, որ համերաշխութեան, փոխադարձ յարգանքի և ընդարձակ համբերողութեան գաղափարները առ միշտ հաստատվեն մարդկութեան մէջ՝ հրաւիրելով մարդկանց եղբայրութեան և համաքաղաքացիութեան։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Պէկին, 28 յունիսի

Ռուսաց հաւատարմատարը յանձնեց չինական կառավարութեան ռուս-եապոնական համաձայնութեան բովանդակութիւնը։ Նոյնանման հաղորդագրութիւն արեց նաև եապոնական հաւատարմատարը։ (Հ. Գ.)

—

Պետերբուրգ, 28 յունիսի

Բագուի քաղաքապետութիւնը ճանաչվում է խօլերայից անվնաս։ Անդրկասպեան շրջանը՝ սպառնական։ (Հ. Գ.)

—

Խէրսօն, 28 յունիսի

Խորտակված նաւից դուրս հանեցին կաչէզարի և մի հինգ տարեկան երեխայի դիակները։ Հիւանդանոցում այրուածքներից մեռան 14. ընդամենը վնասվեցին 48 հոգի։ «Վամպօան» վնասուածքներ չը ստացաւ։ (Հ. Գ.)

—

Պարիզ, 28 յունիսի

Պատգամաւորների պալատում սկսվեց քննութիւն Ժօրէսի, Լէբուկկի և Սէկկալդիի հարցապնդումների առիթով՝ բօրսային գործիչ Բրիշէտի կալանաւորման հանգամանքների մասին։ Հարցապնդողների կարծիքով, Բրիշէտի կալանաւորումը շտապեցնելու համար գործադրված արտակարգ միջոցները վաղօրօք տեղեկութիւն ունեցած ոստիկանութեան անդամներին և դատական մարչութեանը կարելիութիւն են տուել իրագործելու բօրսային խոշոր օպէրացիաներ՝ արժէքաւոր ձեռնարկութիւնքը և վիրաւորում անպիտական քաղաքացիների մի նշանաւոր մասի սկզբունքները։

Եւ ահա, երբ համայնքների ժողովի քուէարկութեան ներկայացրեց Ասկվիտը երդման նոր բանաձևը, որտեղ դէն էին գցված կաթոլիկութեան վերաբերեալ բառերը, ջախջախիչ մեծամասնութեամբ՝ 383 ձայնով ընդդէմ 42-ի անցաւ նոր մշակված բնագիրը։

Թէև անգլիական թագաւորի երդումը, նաև երդման բնագիրը առանձին գործնական նշանակութիւն չունէին անգլիական կեանքի ընթացքի վրա, բայց հասարակական կարծիքը զգում է իրան շատ բաւարարված և միխիթարված, որովհետև անհամբերողութեան և միջնադարեան թշնամութիւնների ամեն մի յիշեցում ծնում է անախորժ զգացմունքներ և ժամանակակից քաղաքացին ցանկանում է, որ համերաշխութեան, փոխադարձ յարգանքի և ընդարձակ համբերողութեան գաղափարները առ միշտ հաստատվեն մարդկութեան մէջ՝ հրաւիրելով մարդկանց եղբայրութեան և համաքաղաքացիութեան։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Պէկին, 28 յունիսի

Ռուսաց հաւատարմատարը յանձնեց չինական կառավարութեան ռուս-եապոնական համաձայնութեան բովանդակութիւնը։ Նոյնանման հաղորդագրութիւն արեց նաև եապոնական հաւատարմատարը։ (Հ. Գ.)

—

Պետերբուրգ, 28 յունիսի

Բագուի քաղաքապետութիւնը ճանաչվում է խօլերայից անվնաս։ Անդրկասպեան շրջանը՝ սպառնական։ (Հ. Գ.)

—

Խէրսօն, 28 յունիսի

Խորտակված նաւից դուրս հանեցին կաչէզարի և մի հինգ տարեկան երեխայի դիակները։ Հիւանդանոցում այրուածքներից մեռան 14. ընդամենը վնասվեցին 48 հոգի։ «Վամպօան» վնասուածքներ չը ստացաւ։ (Հ. Գ.)

—

Պարիզ, 28 յունիսի

Պատգամաւորների պալատում սկսվեց քննութիւն Ժօրէսի, Լէբուկկի և Սէկկալդիի հարցապնդումների առիթով՝ բօրսային գործիչ Բրիշէտի կալանաւորման հանգամանքների մասին։ Հարցապնդողների կարծիքով, Բրիշէտի կալանաւորումը շտապեցնելու համար գործադրված արտակարգ միջոցները վաղօրօք տեղեկութիւն ունեցած ոստիկանութեան անդամներին և դատական մարչութեանը կարելիութիւն են տուել իրագործելու բօրսային խոշոր օպէրացիաներ՝ արժէքաւոր ձեռնարկութիւններով, որպիսիք հիմնված են Բրիշէտի կողմից։ (Հ. Գ.)

—

Բէյրէնի, 28 յունիսի

Մրցումների վախճանից յետոյ, արքայութեան համար մրցանակը ստացաւ Մօրանը։ (Հ. Գ.)

—

Պօլտաւա.—Պերէյասլաւլի զեմստվային ընտրութիւններում անցան հոկտեմբերականներն ու չափաւոր աջակողմեանները։ Սոցիալիստները սխացան։ («Գ. Մ.»)

—

Ժէլէզնօվոդսկ.—Մի քանի հոգի թունաւորվեցին կումիսով։ Կումիսի պատրաստութեան վրա հսկում է բժիշկ Գարդանովը։ («Գ. Մ.»)

—

Զէրնիգով.—Մգլինի գաւառի Գուլիակովկա գիւղում երեխաները մեռելախաղ խաղալիս ողջ-ողջ թաղեցին փոքրիկ աղջիկ Անտոնէնկոյին։ Վերջինս հողի տակ խեղդամահ եղաւ։ («Գ. Մ.»)

ՍԼԱՒՈՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

—

Սոֆիա, 28 յունիսի

Երէկ տեղի ունեցաւ սլաւոնական համագումարի վերջին նիստը։ Կարդացվում են զանազան անձանց ողջոյնները, ի թիւս որոց Լէվ Տոլստոյի, որին համագումարը որոշում է ուղարկել շնորհաւորական հեռագիր։ Ընդունվում են 20 բանաձևեր։ Մակեդոնական յուշագրին համագումարը պատասխանում է սերբ-բոլգարական մերձեցում առաջ բերելու ցանկութեամբ։ Կրամարժը շնորհակալութիւն է յայտնում Բօբչէվին աշխատանքների համար, որոնք համագումարը ցանկալի վախճանի հասցրին։ Գուչկովը ընդգծում է Կրամարժի խաղաղասէր գործունէութիւնը։ Երեկոյեան կայացաւ խնճոյք։

Համագումարը բոլորից համարվում է միանգամայն աջողված։ Սօկոլի համաժողովը տուեց նրան վերջին հանդիսաւոր ակկորդը։ Ականաւոր բոլգար գործիչները համոզված են, որ համագումարը կը նպաստէ այն բանին, որ բոլգարները վառ հետաքրքրութիւն ցոյց կը տան դէպի սլաւոնական հարցը։ (Հ. Գ.)

—

Սոֆիա, 28 յունիսի

Երէկ երեկոյեան կայացաւ հրաժեշտի բանկէտ 400 անձանց համար։ Արտասանվեցին բազմաթիւ կենացներ։ Լեհական հրապարակախօս Զէրնօվսկի իր կենացի մէջ շեշտեց, որ սլաւոնները պարտաւոր են ձեռք տալ միմեանց՝ ամրացնելու համար կապը իրանց մէջ։ Բօբրինսկի և Զէրնօվսկի սեղմեցին միմեանց ձեռքերը և գրկվեցին։ Իւնակները պարահանդէս տուին օֆիցէրական ժողովում ի պատիւ բազէների։ Առաւօտեան, Սոֆիայի մօտ գտնվող

ՌԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՅԻՍՈՒՍ-ՔՐԻՍՏՈՍ ՎԿԱՑ

(Սարթական լեգենդա)

—

Շատ վաղուցվայ բան է, այնքան՝ որ ոչ ոք ասել չէ կարող։ Մարդիկ այն ժամանակ ուրիշ կերպ էին ապրում։ Առատութիւն էր թէ որսորդի, թէ երկրագործի և թէ անասնապահի համար։ Լեռները և գետերը լիքն էին որսով, դաշտերում և անտառներում վիսում էին ամեն տեսակ թռչունները։ Ամենքը բաղդաւոր էին և գոհ. բաղդաւոր մանաւանդ և այն պատճառով, որ երկրի վրա էր Աստուծոյ ամենամեծ առաքեալներից մէկը՝ Յիսուս-Քրիստոս։

Ծանրաքայլ, յանդիմանութեան մէջ խիստ, Յիսուս չէր քաշվում թէ թագաւորից և թէ աղքատից։ այդ պատճառով էլ առանձնապէս յարգում էր նրան ժողովուրդը։ Բայց Քրիստոս ունէր և իրան ատողներ։ չը կամենալով զրգռել վերջիններին, նա իր կեանքի մեծ մասը անց էր կացնում լեռներում ու դաշտերում, ուշ-ուշ միայն երևալով քաղաքներում։ Եւ ահա մի անգամ, քաղաք մտած ժամանակ, պատահեց հետեւեալ դէպքը։

Մի քաղաքում ապրում էին մարդ ու կին, ապրում էին ինչպէս աղաւնիներ, սիրելով ու դուրգուրելով միմեանց։ Այդպիսի քնքշութեան բոպէներից մէկում նրանք փոխադարձ երդվեցին, որ, իրանցից որը առաջ մեռնի, կենդանի մնացողը իր կեանքի մնացորդը անցկացնէ մեռածի գերեզմանի վրա։

Առաջ մեռաւ կինը, և մարդը, իր խօսքին հաստատ մնալով, իր կեանքը անց էր կացնում կնոջ գերեզմանի վրա։ Այդպէս նա ապրեց 43 տարի։ Հանգիստ, խոնարհ նա նստում էր գերեզմանի վրա, իր անցեալ բաղդաւոր կեանքը միտ բերելով։

Մի անգամ նրա մօտով անցաւ Յիսուս և ողջունեց նրան. ծերունին յարգանքով պատասխանեց նրա ողջունին։

— Ինչու՞ ես նստած այդտեղ, ծերունի,—հարցրեց Քրիստոս։

Ծերունին ամբարտաւան պատասխանեց Քրիստոսին։

Զարմացաւ Քրիստոս նրա անձնուիրութեան և հաւատարմութեան վրա, մանաւանդ երբ նայեց կեանքի գրքին և տեսաւ, որ ծերունուն միայն 18 տարի է մնացել ապրելու։ Քաղցր հայեացքով նայեց նա ծերունուն և հարցրեց։

— Կամենո՞ւմ ես կեանքիդ մնացած ընթացքում մօտդ ունենալ կնոջդ, ծերունի։

— Օ՜, ինչպէ՞ս բաղդաւոր կը լինէի,—հրճուանքով ասաց ծերունին։

Այս ասաց թէ չէ՝ Քրիստոս ձեռքերը պարզեց գերեզմանի վրա. գերեզմանը բացվեց և հրացած ծերունու դիմաց կանգնեց մի կին՝ աննման գեղեցկութեամբ. ալեծածան մազերը մինչև կրունկներն էին հասնում, գեղեցկագեղ մարմինը կաթի գոյն ունէր, վիզը նազելի՝ ինչպէս կարապի, իսկ վարվռուն ու այրող աչքերից բաղդ ու երջանկութիւն էր բուրում։

— Եղիր բաղդաւոր,—ասաց Քրիստոս ու հեռացաւ։

Սառած, հրացած ծերունին մինչև անգամ մոռացաւ շնորհակալութիւն յայտնել Քրիստոսին։ Բուռն ցանկութեամբ մօտեցաւ նա գեղեցկուհուն, դողդողալով բռնեց նրա ձեռքը և ասաց.

— Այստեղ տաք է քեզ համար. գնանք ահա այն տերևախիտ սօսենու տակ. դու հանգստացիր այնտեղ, իսկ ես վառելիք կը գտնեմ, թէյ կը պատրաստեմ և կը հիւրասիրեմ քեզ անուշահոտ թէյով ու քաղցր խմորեղէնով։

Գեղեցկուհին գնաց նստեց ծառի տակ, իսկ ծերունին ուրախ-ուրախ գնաց ցախ ժողովելու։

Այդ նոյն օրը որսի էր դուրս եկել այդ երկրի թագաւորի միակ որդին, որին անտանելի շոգը նոյնպէս ստիպեց գնալ սօսենու հովը, որին մօտենալով արքայորդին իջաւ ձիուց, սանձը ձգեց ծառային, մի քանի քայլ մօտեցաւ և յանկարծ աչքն ընկաւ գեղեցկուհուն։

Արքայորդու բոլոր ջանքերը մի ցանկալի հարմնացու գտնելու՝ մինչ այդ՝ դուրս էին անցել։ հազիւ վերջապէս նա տեսաւ մի կնոջ, որը այդպէս ջերմ ու քաղցր տպաւորութիւն թողեց նրա վրա։ Հիացած-վերացած՝ նա կանգնած էր գեղեցկուհու դիմաց. հազիւ ուշքի գալով՝ նա հարցրեց.

— Ո՞վ ես դու, գեղեցկուհի, ինչու՞ ես այստեղ, ասա. մի վախենայ ինձանից. ես այս երկրի թագաւորի միակ որդին եմ։

Գեղեցկուհու աչքերը ապշութեան կրակով վառվեցին. նա կնոջ համեստութեամբ պատասխանեց.

— Տէր, ես մի հարուստ վաճառականի աղջիկ եմ. այսօր գիշերը, երբ խորը քնած եմ եղել, ինչ որ մի յանդուգն շրջմոլիկ գողացել է ինձ և բերել այստեղ. այս տեղերի հետ անծանօթ եմ, ինչ անելս չը գիտեմ. ազատիր ինձ խնդրեմ. մինչև կեանքիս վերջը երախտապարտ կը մնամ քեզ։

Հիացած արքայորդին ասաց.

— Լսիր, նազելիս, ես ամբողջ մեր երկրի մէջ մինչև այժմ չը դարողացայ գտնել ինձ համար սրտիս ուզած մի հարմնացու. այսօր, ինչպէս երևում է, գտայ վերջապէս. ասա, քո մի քաղցր խօսքը ընդմիշտ երջանիկ կանէ ինձ։

Հրապուրիչ գեղեցկուհին չուշացրեց ցանկալի պատասխանը։

Բաղդաւորված արքայորդին թռաւ ձիու վրա, գեղեցկուհուն առաւ թերը և իր սիրուն որսը տուն թռցրեց։ Փողերի ձայնից թագաւորն իմացաւ որդու գալը. իր սովորութեան համաձայն՝ նա իր սիրելի ու միակ որդուն ընդառաջ դուրս եկաւ և խիստ զարմացաւ, երբ նրա հետ անծանօթ կընոջը տեսաւ։ Արքայորդին իր բաղդաւոր հանդիպումը պատմեց հօրը և հանեց քոջը կնոջ երեսից։ Հիացած թագաւորը, կնոջ անման գեղեցկութիւնը տեսնելով, որդուց ոչ պակաս ուրախացած՝ պատուիրեց շուտով հարսանիքի պատրաստութիւն տեսնել։ Երաժիշտներին ու փողհարներին պատուիրեց անդադրում նուագել։

— Թող բոլոր ժողովուրդն իմանայ որդուս բաղդաւորութեան մասին և ցայ մասնակցի նրա ուրախութեանը։

Ամենքն իրար անցան, ժողովուրդը ամեն կողմից խումբ-խումբ հաւաքվեց, եկաւ և իմաց։ Այդ ժամանակ պալատի դրսի դրան մօտ մի աղաղակ բարձրացաւ, օգնութիւն կանչելու ձայներ լսվեցին. վրդովված թագաւորը հարցրեց.

— Ի՞նչ է այն, ով է կանչում, բերէք նրան այստեղ։

Շուտով թագաւորին ու նրա պալատականներին ներկայացաւ մի ծերունի, որի տեսքը զարհուրելի էր, մազերը գզգված, դէմքը այլայլված. նա ընկաւ թագաւորի առաջ.

— Թագաւոր,—ասաց նա,—քո որդին, մեր ապագայ թագաւորը, գողացաւ կնոջս և բերեց այստեղ՝ պալատ. քննիր իմ բողոքս և հրամայիր քո անառակ որդուն, որ վերա-

---

բուեան համաձայն՝ նա իր սիրելի ու միակ որդուն ընդառաջ դուրս եկաւ և խիստ զարմացաւ, երբ նրա հետ անծանօթ կընոջը տեսաւ։ Արքայորդին իր բաղդաւոր հանդիպումը պատմեց հօրը և հանեց քոջը կնոջ երեսից։ Հիացած թագաւորը, կնոջ անման գեղեցկութիւնը տեսնելով, որդուց ոչ պակաս ուրախացած՝ պատուիրեց շուտով հարսանիքի պատրաստութիւն տեսնել։ Երաժիշտներին ու փողհարներին պատուիրեց անդադրում նուագել։

— Թող բոլոր ժողովուրդն իմանայ որդուս բաղդաւորութեան մասին և ցայ մասնակցի նրա ուրախութեանը։

Ամենքն իրար անցան, ժողովուրդը ամեն կողմից խումբ-խումբ հաւաքվեց, եկաւ և իմաց։ Այդ ժամանակ պալատի դրսի դրան մօտ մի աղաղակ բարձրացաւ, օգնութիւն կանչելու ձայներ լսվեցին. վրդովված թագաւորը հարցրեց.

— Ի՞նչ է այն, ով է կանչում, բերէք նրան այստեղ։

Շուտով թագաւորին ու նրա պալատականներին ներկայացաւ մի ծերունի, որի տեսքը զարհուրելի էր, մազերը գզգված, դէմքը այլայլված. նա ընկաւ թագաւորի առաջ.

— Թագաւոր,—ասաց նա,—քո որդին, մեր ապագայ թագաւորը, գողացաւ կնոջս և բերեց այստեղ՝ պալատ. քննիր իմ բողոքս և հրամայիր քո անառակ որդուն, որ վերա-

քանակում, ներկայութեամբ մինիստրների, համաժողովի անդամների, բաղձների և բազմաթիւ հասարակութեան՝ գարնանը զինուորակոչի կանչված զինուորներին երդում տուեցին, ապա զօրքերը և իւնակները անցան ժողովականների առջևից։ (Հ. Գ.)

—

Վիէննա, 28 յունիսի

«Կօրրէսպօնդ. Բիւրօյին» Սէրաեվից հաղորդում են, որ այնտեղ բացված բօսնիական սօցիալ-դեմօկրատիական կուսակցութեան անդամների համագումարը պարսաւեց համասլաւօնական կօնգրեսը՝ բողոքելով Կրաւարժի հանդէս գալու դէմ։ (Հ. Գ.)

ԹԻՒՐԻՒԱ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Կ. Պոլիս, 28 յունիսի

Ցունական մթերքների բօյկոտը շարունակվում է առաջվան ոյժով, չը նայելով կառավարութեան շրջաբերականին։ Այստեղ լաւ տպաւորութիւն գործեց հակաթիւրքական յարձակումների բացակայութիւնը սլաւօնական համաժողովի վրա։ (Հ. Գ.)

—

Ֆիրիւզա, 28 յունիսի

Գնացքի խորտակման ժամանակ սպանվեցին 19, վիրաւորվեցին 31 հոգի։ արանցից ծանր՝ 9 հոգի։ Խորտակման պատճառը պարզված չէ։ (Հ. Գ.)

—

Թէհրան, 28 յունիսի

300 էտաշկայցիներ գրաւեցին Սպահանը։ Տեղական բախտիարները թոյլ տուին նրանց առանց դիմադրութեան։ (Հ. Գ.)

—

Թէհրան, 28 յունիսի

Սիփէհդարի և Սարդար-Ասադի հրաժարականը ընդունվեց։ Նոր կաբինէտի նախագահ նշանակվեց Մուստաուֆի-ուլ-Մէմալիքը։ (Հ. Գ.)

ՆԵՐԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԱՄԱՌԱՅԻՆ ԿՈՒՐՍԵՐԸ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

Լուսաւորութիւն տարածող ընկերութեան «ուսուցչական կուրսեր կազմակերպող մշտական յանձնաժողովի» նախաձեռնութեամբ Պետերբուրգի համալսարանում ներկայումս կարդացվում են հանրագիտական և մանկավարժական դասախօսութիւններ ամենտեսակ դպրոցների ուսուցիչների համար։ Ռուսաստանի զանազան կողմերից եկել են աւելի քան 1200 ուսուցիչներ և ուսուցչուհիներ։ Կան ուսուցիչներ Մանջուրիայից, Սիբիրից, Անդրկասպեան շրջանից, Կովկասից, Ղրիմից, Լեհաստանի և Արևմտեան նահանգներից և գլխաւորապէս միջին նահանգներից։ Մեծ մասամբ եկել են նրանք իրանց ծախսով, քչերը միայն զեմստվային կամ քաղ. վարչութիւններից հաշուով։

Յունիսի 8-ին, սկսելով դասախօսութիւնները, յանձնաժողովի նախագահ պրոֆ. Սավիչը նախ ողջունեց ուսուցիչներին նրանց գալուստը, իբրև մանաւոր հիւրերի, և ապա ներկայ նշանակալից դէպքը, երբ լուսաւորութեան չարքաշ մշակներին աւոդվել է համախմբվել, մտքերի փոխանակութիւն ունենալ, գիտութեան բարձրագոյն հիմնարկութեան մէջ որոշ չափով լայնացնել ու թարմացնել իրանց մտաւոր պաշարը և մշտական կապ հաստատել մտաւոր կեանքի լաւագոյն ներկայացուցիչների հետ։ Խօսելով ընդհանուր և մասնագիտական մանկավարժութեան նշանակութեան մասին, նա ասաց, թէ ուսուցիչը ոչ միայն գիտական բաւարար ուսում պիտի ունենայ, այլ և բազմակողմանի զարգացած մանկավարժ պիտի լինի. կրթելով բոլոր աշակերտներին հաւասարապէս, նա միևնոյն ժամանակ պիտի կարողանայ գտնել և զարգացնել ամեն մի աշակերտի անհատական վսեմ ընդունակութիւնները։

Պրոֆեսօր Սավիչից յետոյ մանկավարժ Դուշէչկինը խօսեց ուսուցչական ամբարյին կուրսերի նշանակութեան մասին թէ ընդհանրապէս ժողովրդական լուսաւորութեան տեսակէտից և թէ մասնաւորապէս իրանց, ուսուցիչների, անձնական շահերի տեսակէտից։ Տեղեկացնելով ունկընդիրներին՝ թէ ինչ դժուարութիւններով աջողվել է կուրսեր կազմակերպելու իրաւունք ձեռք բերել, Դուշէչկինը խնդրեց ունկնդիրներին պահպանել այդ իրաւունքը և ապագայի համար։

Ի վերջոյ խօսեց պրոֆեսօր Բօրոզդինը զարգացման աստիճանների մասին։ Համեմատելով տորին, միջին և բարձրագոյն դպրոցները իրար հետ՝ նա ասաց, թէ բոլոր դպրոցների գլխաւոր նպատակը նախ և առաջ պիտի լինի իսկական զարգացած մարդիկ պատրաստել։

Բոլոր ճառերից յետոյ անվերջ ծափահարութիւններով աուդիտորիան դղրդում էր։

Միւս օրը, ամսի 9-ին, դասախօսութիւնները սկսվեցին կանոնաւոր ծրագրով։

Բնագիտութեան պրոֆէսօր Օրլովը, նախքան դասախօսութիւն սկսելը, նոյնպէս ողջունեց ուսուցիչներին և նրանց նմանեցրեց բարդիյի էլեքտրօններին, որոնք տարածվելով ընութեան մէջ՝ լոյս են սփռում ամեն տեղ։

Կուրսերի պատասխանատու կառավարիչներ ընտրված են պրոֆէսօրներ Սավիչ, Վասիլիև, Բօդուէն-դէ-Կուրտենէ և Դուշէչկին։

Աւելորդ չեմ համարում թէել այստեղ՝ թէ ով ինչ առարկայից դասախօսութիւններ է կարդում.

I. Օրլով՝ բնագիտութիւն, Դուբեանսկիյ՝ բուսաբանութիւն, Լեիդիս տիեզերագիտութիւն, Կնիպովիչ՝ կենդանաբանութիւն, Մալչեվսկիյ՝ քիմիա, Լեման՝ երկրաբանութիւն։

II. Կօգան՝ XIX դարի գրական հոսանքները Արևմտեան Եւրօպայում, Լապշին՝ պատմութիւն փիլիսօփայութեան ու մանկավարժութեան և հոգեբանութեան, Բօդուէն-դէ-Կուրտենէ՝ լեզուաբանութիւն, Բերնացկիյ՝ քաղաքատնտեսութեան գլխաւոր հիմունքները, Բօրոզդին՝ պատմութիւն ռուսաց գրականութեան։

III. Ախուտին՝ մանկավարժութիւն, Կուլման՝ ուղղագրութիւն և քերականութեան դասաւանդութիւն, Օրշանսկիյ՝ գեղարուեստը դպրոցում, Դուշէչկին՝ դասաւանդութիւն և գործնական մանկավարժութիւն, Կրժիկովսկիյ՝ ընախօսութիւն և մարդակազմութիւն, Ուլարով՝ դպրոցական առողջապահութիւն, Կրասուսկայա՝ ֆիզիքական կրթութիւն, Սմիրնով՝ նկարչութեան դասաւանդութեան եղանակները, Գոլուբեվ՝ երգեցողութիւնը ժողովրդական դպրոցներում, Սավիչ՝ գրահաշուի դասաւանդութիւն։

Թէև ուսուցիչները առաջուց գրվել են այս կամ այն սեկցիայի, սակայն ժամանակի յարմարութեան պատճառով նրանք յայտնում են բոլոր դասախօսութիւնները։ Պրոֆեսօր Օրլովը ստիպված եղաւ միևնոյն դասախօսութիւնը օրական երկու անգամ կրկնել, որովհետև բոլոր ունկնդիրները միանգամից անկարող էին տեղաւորվել ֆիզիքական ինստիտուտի աուդիտորիայում։

Երբ ուսուցիչները յարգելի պրոֆեսորին շնորհակալութիւն յայտնեցին նրա կրկնակի աշխատութեան համար, նա պատասխանեց.

— Այսպիսի աուդիտորիայում պարապելը բաւականութիւն է։

Պրիվատ-դոցենտ Կօգանը անցեալ օրը վերջացրեց իր դասախօսութիւնները. ուսուցիչները օվացիա սարքեցին նրան։ Տարօրինակ, բայց դուրեկան է տեսնել, թէ որպիսի ագահութեամբ ուսուցիչները լսում և արձանագրում են դասախօսութիւնները։ Ընդմիջումների ժամանակ սաստիկ իրարանցում, մտքերի փոխանակութիւն է լինում. բաժանվելով առանձին պատահական խմբերի, նրանք վիճում են զանազան հարցերի վերաբերմամբ և ընդհանուր ոյժերով պարզում ու հասկացնում են իրար դասախօսութեան այս կամ այն դարձնի ինձ իմ կնոջը։

— Լաւ, անպիտան ծերուկ, դու սուտ ես խօսում,—ասաց վիրաւորված թագաւորը,—իմ որդու վրա շատ ես ձգում. գեղեցկուհին, որին նա բերեց այստեղ, մարգարէի դրախտում հուրիների հետ լինելու արժանի է. նա չէ կարող քեզպէս թափառաշրջիկի կինը լինել. ասա, ինչ ապացոյց ունես, թէ չէ՝ կը պոկեմ քո պիղծ լեզուն, կը հանեմ աչքերդ։

— Թագաւոր, դու արդարադատ ես, և ես ճշմարիտ եմ խօսում. քո որդին գող է. ես վկայ ունեմ և իմ վկան Քրիստոսն է, Աստուծոյ առաքեալը։ Դադարեցրու հարանիքը և ինձ երեք օր ժամանակ տուր, ես երեք օրից կը ներկայացնեմ քեզ իմ վկան։

— Սուտ ես խօսում, անպիտան ծերուկ, ես քեզ չեմ հաւատում. որդուս հարսանիքը չեմ դադարեցնի և քո պիղծ մարմինը կախաղան հանել կը տամ։ Դահիճներ, վերցրէք դրան։

Բայց այստեղ մէջ ընկաւ ծերունի վէզիրը։

— Մի շտապիր, թագաւոր, կը շտապես՝ էլ ուղղելը ուշ կը լինի. կեանքիդ վերջին օրերը անարդարութեամբ մի նսեմացնի. դու արդարադատ ես. ես այդ գիտեմ. դրա համար էլ խնդրում եմ, ծերունուն ձեռք մի տայ. յետաձգիր հարսանիքը երեք օր. ծերունին այնպիսի վկայ բերեց, որին երեք օրից աւելի էլ կարելի է սպասել. թող գայ, լսիր նրա ցուցմունքը. չես զղջայ։

Թագաւորի խոժոռված դէմքը պարզվեց. նա ողորմածաբար նայեց վէզիրին և ասաց.

— Արդարացի ես ասում, վէզիր։ Ծերուկ, քեզ երեք օր ժամանակ եմ տալիս. գնա, բեր վկադ։

Ժողովուրդը ցնծութեամբ ողջունեց իր թագաւորին և ուրախութեամբ ճանապարհ բացեց ծերունու համար, որը շտապեց գնալ իր վկան գտնելու։ Նա շատ դաշտեր, քաղաքներ անցաւ, ամեն տեղ հարցրեց Յիսուս Քրիստոսի մասին, բայց ոչ ոք չը կարողացաւ նրան ցոյց տալ Յիսուսի տեղը։ Մինչ այդ՝ երրորդ օրվայ վերջը մօտեցաւ։ Տանջված, յոգնած՝ ծերունին պառկեց հանգըստանալու. քնի մէջ երևաց նրան Քրիստոս և հրամայեց անմիջապէս գնալ թագաւորի մօտ և էլի երեք ժամ ժամանակ խընդրել, իր կողմից խոստանալով որոշված ժամանակին այնտեղ գտնվել։ Ծերունին սարսափած վեր թռաւ տեղից և վազեց պալատ՝ թագաւորի մօտ։ Ժողովուրդը, տեսնելով որ ծերունին մենակ է գալիս, տխրեց՝ թագաւորի խիստ պատժին սպասելով։ Ուրախ-ուրախ ծերունին մօտեցաւ թագաւորին և ասաց.

— Թագաւոր, ես խոստացայ քեզ վկաս ներկայացնել երեք օրից, բայց շատ ժամ եկայ՝ ոչ մի տեղ չը գտայ նրան. երրորդ օրը վերջանալու վրա էր, երբ ես յոգնած, տանջված՝ քնեցի, յոյսս կտրելով նրան գտնելուց. քնիս մէջ ինձ երևաց Յիսուս-Քրիստոս, պատուիրեց անմիջապէս գալ քեզ մօտ և էլի երեք ժամ ժամանակ խընդրել, խոստանալով անպատճառ գալ երեք ժամից յետոյ։ Հաւատա ինձ, թագաւոր, և, խնդրում եմ, էլի երեք ժամ ժամանակ տուր։

Թագաւորի դէմքը մթնեց, աչքերը չարագուշակ վառվեցին և նա ահռելի ձայնով մռնչաց.

— Անզգամ, բաւական է մարդկանց յիմարացնես. քո տեղը կախաղանն է. դահիճներ, առէք դրան։

Բայց այդ ժամանակ էլի մօտ եկաւ ծերունի վէզիրը.

— Թագաւոր,—ասաց,—ուշքի եկ. շատ չէ մնացել քեզ ապրելու. ի նկատի ունեցիր այդ. սպասեցիր երեք օր, դժուար չէ սպասել էլի երեք ժամ։

Ժողովուրդն էլ իր կողմից սկսեց խնդրել։ Թագաւորը նայեց ժողովրդին, աչքերը երկինք դարձրեց և ողորմածաբար ասաց.

— Դարձեալ շնորհակալ եմ քեզնից, վէզիր, իրաւացի ես ասում։ Ծերունի, էլի երեք ժամ ժամանակ եմ տալիս քեզ։

Անցաւ մի ժամ, անցաւ երկրորդը, երրորդն էլ մօտենում էր իր վախճանին։ Ժողովրդի համբերութիւնը հատնելու վրա էր. նա լարված սպասում էր։

Ցանկարծ ամենքը ցնծագին աղաղակելով կանչեցին.

— Գալիս է, գալիս է. ահա նա։

Եւ, յիրաւի, հեռուում երևաց ամպը, որով շրջապատված էր Յիսուս. և շուտով ժողովուրդը տեսաւ իրան՝ Յիսուս-Քրիստոսին։ Ամենքը ակնածութեամբ ետ քաշվեցին և ճանապարհ տուին նրան։ Լուռ, գլուխը խոնարհած մօտեցաւ Յիսուս թագաւորին։ Թագաւորը գահից վայր իջաւ և յարգանքով ու խոնարհութեամբ խնդրեց Քրիստոսին նստել գահի վրա։ Քրիստոս նստեց, աչքի անցրեց ժողովուրդը և ասաց.

— Ինչ էք կամենում ինձանից։

Թագաւորը պատմեց գործի էութիւնը։

Քրիստոս դարձաւ ծերունուն և առաջարկեց, որ նա էլ պատմի եղելութիւնը։

Ծերունին պատմեց բոլոր անցածը, որից յետոյ Յիսուս դարձաւ գեղեցկուհուն և հարցրեց.

— Ճի՞շդ է պատմում ծերունին։

Գեղեցկուհին բարկացած և վիրաւորված ասաց.

— Դարշելի ծերունին սուտ է խօսում. նա գողացել է ինձ, երբ ես խորը քնած եմ եղել. ես հարուստ ծնողների աղջիկ եմ։

Բարկութեամբ լցվեց Յիսուս. Աստուծոյ առաքեալը վեր կացաւ տեղից, որտի նման ուժեղ ու սոխակի նման քաղցր ձայնով ասաց.

— Ժողովուրդ, ծերունին չէ խաբում. նա հաստատ իր խոստմանը՝ 43 տարի անցրել է այս խաբեբայ դաւաճանի գերեզմանի վրա. ես ստեղծեցի սրան հողից, ես տուի սրան այս սքանչելի գեղեցկութիւնը, և դուք տեսնում էք թէ ինչպիսի երախտագիտութիւն է ցոյց տալիս. Աստուած չէ տանի այդ, և անա սրա պատիժը։

Այս ասաց Քրիստոս և ձեռքերը պարզեց դէպի կինը։ Մի ակնթարթում գեղեցկուհին ապշած ամբոխի դիմաց դարձաւ հողի մի փոքրիկ կոյտ։ Ժողովուրդը այս հրաշքը տեսնելով՝ իր թագաւորի հետ ծունկ չոքեց Աստուծոյ առաքեալի առաջ և խորը երկրպագեց նրան, և երբ գլուխը վեր բարձրացրեց, այլ ևս Քրիստոս չը կար այնտեղ։

Քրիստոսի ցոյց տուած այդպիսի պատուի և արդար դատաստանի առիթով թագաւորը մեծ խնճոյք սարքեց, որի ժամանակ թագաւորի կողքին, իբրև պատուաւոր հիւր, նստած էր ծերունին։ Դրանից յետոյ ծերունին իր կեանքի վերջին օրերը անցրեց թագաւորի մօտ, նրա պալատում՝ պատուով ու ամենքից յարգված։ Հանգիստ մեռաւ նա և իր արժանի տեղը գտաւ Աստուծոյ աթոռի առաջ։

Թարգ. Վ. ք. Ասկարեանց

(«Туркест. Кр.»)

ՄՈՎՍԷՍ ԹԱՒԱԴԵԱՆ

Այսօր հողին է յանձնվում շուշեցի Մովսէս Թաւադեանը, որ ամսիս 21-ին վախճանվեց Կիսլովոդսկում։

Ի նկատի ունենալով, որ հանգուցեալի թողած կարողութեան մասին զանազան լուրեր են պատում, մենք հնարաւորութիւն ունենք հաղորդել այն, ինչ որ այժմ միակ ճիշդն է։

Արդարև, հանգուցեալը թողել է բաւական մեծ կարողութիւն։ Նա կտակ չէ թողել։ Ունի ազգականներ Ղարաբաղում (Վարանդայում), բայց ամենամօտ ժառանգը և ամենամօտ ազգականը՝ Բօղդան Գասպարեան Գասպարեանցն է, որ և եղել է հանգուցեալի մտերիմն ու գործերի կառավարիչը։ Ահա վերջնիս հանգուցեալը յայտնել է իր ցանկութիւնը և իղձերը ի՛նչպէս վարվել իր կարողութեան հետ, խորհրդակցելով որոշ անձերի հետ։ Երբ ժառանգական գործը կը կարգադրվի—իսկ դա կարող է լինել 6 ամսից ոչ առաջ—Բօղդան Գասպարեանցը, իր հայեցողութեամբ և խորհրդակցութեամբ մի քանի ձեռնհաս անձանց հետ, կորոշէ ինչ նպատակների յատկացնել կուլտուրական նպատակների համար սահմանված գումարը։ Առ այժմ այսքանը կարող ենք ասել, որ դիտաւորութիւն կայ յաւերժացնել հանգուցեալի յիշատակը Ղարաբաղում (իր հայրենիքում) մի ձեռնարկութեամբ։

Հ. Ա.

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԵՒ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ՄԷՋ

Էջմիածնից հաղորդում են, որ այնտեղ դիտաւորութիւն կայ հրատարակել մինչև ուսումնարանական տարին մի տնօրէնութիւն, որ կարևոր նշանակութիւն պէտք է ունենայ։

Ինչպէս յայտնի է, ուղղագրութեան հարցը մեր դպրոցների և դասագրքերի ցաւոտ կողմն է կազմում։ Կան դասագրքեր ե-ով գրված, կան և հին աւանդական ուղղութեամբ։ Վերջերս հրապարակի վրա դրվեց և վ-ի ուղղագրութիւնը, որով նախաձեռնողները մտադիր են վերջ տալ այն քաոսին, որ ստեղծվել է մեր դպրոցական կեանքի մէջ ե-ի ուղղագրութեամբ։

Այժմ դիտաւորութիւն կայ պարտադիր կանոն հրատարակել, որ հայոց եկեղեցական-ծխական և հոգևոր դպրոցներում ուղղագրութիւնը լինի հին, աւանդական, և գործադրվեն միայն այն դասագրքերը, որոնք գրված կը լինեն հին ուղղագրութեամբ։

Այս հանգամանքը կարևոր է նրանց համար, որոնք մտադիր են դասագրքեր կազմել։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Զանգեզուր, 19 յունիսի

Ծաղկաձոր, Դարաչիչակ կամ Զանգեզուր կոչվող ամբարանոցը գտնվում է 54 վերստ հեռաւորութեամբ Երևանից։ Այստեղ գալիս են համարեա թէ բոլոր դիւանատները բացի մի քանիսից, որոնց մասը Երևանում անհրաժեշտ է, օրինակ՝ գանձարանը, հաշտարար դատարանը և բանկերը։ Գալիս են նաև մասնաւոր մարդիկ, որոնց հանգամանքները ներում են։ Ուրեմն Երևանի ամբողջ ինտելիգենցիան գտնվում է այստեղ։

Ծաղկաձորը շատ գեղեցիկ տեղ է՝ երկու կողմից պատած բարձր և կանաչ լեռներով, որոնք կոչվում են Մատան և Ալի-Բէկ, իսկ երկու կողմից՝ անտառներով։ Այս ամբարանոցն ունի 3 հին վանքեր մի բակի մէջ։ Այդ վանքերը, որ շինված են 1000 տարի սրանից առաջ՝ հայոց Գագիկ թագաւորի ժամանակ, ներկայումս կարօտ են վերանորոգութեան, իսկ ժողովուրդը հոգ չէ տանում դրա մասին։ Այդ վանքերից միմիայն մէկն է նորոգված, այսինքն կտուրը ծածկված երկաթէ ծածկով, որի մէջ լինում է ժամասացութիւն. երկրորդ վանքի գմբէթը բոլորովին խանգարված է և նրա նորոգութեան համար հարկաւոր է տասնեակ հազար, իսկ երկրորդը շատ հեշտութեամբ կը նորոգվի, որովհետև քարն էլ է պատրաստ, փողն էլ։

Սրանից 8—9 տարի առաջ Երևանցի հանգուցեալ Աւ. Տէր-Յովակիմեանը կտակել է 4000 ր. այդ վանքի վերանորոգութեան համար, և այդ գումարը գտնվում է Թադէոս Քալանթարեանի մօտ։ Թէ ինչու համար է պահում վերջինս այդ փողերը, ես չը գիտեմ։

Քանիցս իմ ականջովս լսել եմ օտարներից, թէ «ամօթ չէ՞ բան ձեզ հայերիդ, որ թողնում էք այս տեսակ գեղեցիկ վանքը, հնութիւնն այդ դրութեան մէջ»։ Ես էլ եմ կարծում, որ ամօթ է և շատ ամօթ, բայց ինչ արած որ չեն նորոգում։

Ինչպէս վերևը յիշեցի, Երևանի ամբողջ ինտելիգենցիան գալիս է այստեղ ամարանոց. կիրակի օրերը եկեղեցին լի է լինում ժողովրդով, և որովհետև վանքը խիստ փոքր է, ուստի մեծ տօներին շատերը մնում են դուրսը։

Ինքը Թ. Քալանթարեանը ներկայ է լինում Աստուածածնի տօնին (նրա ընտանիքն էլ բնակվում է այստեղ, և նա ինքը Երևանի առաջնակարգ հարուստներից մէկն է հայերի մէջ), երբ ոչ թէ բոլոր հայերը, այլև ռուսներից և Թուրքերից շատերը յաճախում են եկեղեցին և մնում են բակում։

Ցանկալի էր, որ հէնց այս տարի, քանի դեռ ուշ չէ, սկսվէր վանքի վերանորոգութիւնը։

Ծաւակցող

—

Գիրք գիւղ (Բագուի նահ.), 14 յունիսի

Այն քաօսային վիճակը, որ տարիներ շարունակ ստեղծված է եղել մեր թեմի դպրոցներում, թեմական խորհրդի և տեսչի ընտրութեամբ՝ յոյս կայ որ ժամանակի ընթացքում վերանայ։ Նորընտիր թեմական տեսուչն արդէն ձեռնարկել են մի շարք բարենորոգումների։ Թեմական տեսուչ Ն. Վ. Տէր-Միքայէլեանը Շամախու գաւառում գտնված դպրոցների ուսումնական և տնտեսական գործերը քննելուց յետոյ մայիսի 19-ին նոյն նպատակով ժամանեց և մեր գիւղը։ Քննելով տեղիս դպրոցի աշակերտներին բոլոր առարկաներից, ծանօթանալով հոգաբարձութեան գործերին, մի շարք գործնական խորհուրդներ տալուց յետոյ յորդորեց թէ ուսուցիչներին և թէ հոգաբարձութեանը, որ այսուհետև աշխատեն ամենամեծ պատրաստականութեամբ կատարել իրանց սուրբ պարտականութիւնը։

Շրջանիս գիւղերում դպրոցների կարիքը չափազանց մեծ է. չը նայած որ մի քանի գիւղերի՝ բագուաբնակ հարուստներ պատրաստ են նիւթական մեծ աջակցութիւն ցոյց տալ դպրոցների բացման խնդրում, մի քանի գիւղեր էլ ամենասպէս այնքան

դարձաւ դեպի Յիսուս թագաւորը։ Նա ոտքերի տակ էր նայում, ամաչում էր։ Նա ուզում էր ասել, թէ ինչ մեղաւոր է նա, ինչ անարգ է նա, ինչ անարժան է նա

բարեկեցիկ կացութեան մէջ են, որ առանց զրկանքների կարող են կանոնաւոր դպրոցներ պահել, բայց դեկավարող, խրախուսող անձնաւորութիւնների պակասութեան պատճառով, դպրոցների վերաբացվելուց յետոյ, համարեա դպրոցների թիւը չէ աւելացել։ Գոյութիւն ունեցող դպրոցների կանոնաւորութիւնը և վերոյիշեալ գիւղերի լուսաւորութիւնն մեծ գործը ներկայ թեմական տեսչի ուսին է ծանրանում։

Թեմական տեսչի ներկայութեան օրը ֆիական դպրոցի ուսուցիչները տուին մի աշակերտական երեկոյթ։ Երեկոյթը բացվեց «Մեր հայրենիք» երգով։ Աշակերտները ներկայացրին «Հասկերի» մէջ տպված «Նոր վարժուհի» մանկական պիէսը, իսկ այնուհետև արտասանեցին և երգեցին մի շարք տասնաւորներ և երգեր։ Թէ մանկական պիէսը և թէ տասնաւորները բաւարար կերպով կատարվեցին, այնպէս որ հասարակութիւնը գոհ սրտով հեռացաւ ուսումնարանից։

Այս տարի մեզ մօտ մարտ և ապրիլ ամիսներն երաշտ լինելու պատճառով համարեա խոտ չէ կայ, իսկ արտերը բաւարար կը լինեն, եթէ մէկները չէ փչացնեն։ Յ. Շ.

—

Մանգլիս, 24 յունիսի

Տեղիս հայ հասարակութեան ճահիճը պղծվեցաւ, վեր ցատկեցին նրա բնակիչները և ճիչ բարձրացրին, թէ ինչու նրանց արարմունքը լրագրի միջոցով քննադատում են։ Նկարագրեմ մեր հասարակութեան գործիչների նոր արածները։

Վերջերս վախճանվեց տեղիս զօրագնդի մի վրացի օֆիցէր. նրա մարմինը բերին Մանգլիս ամսիս 16-ին։ Ըստ զինուորական օրինաց՝ որոշված էր պատիւ տալ հանգուցեալին։ Սգահանդէսը պիտի սկսվէր այն կէտից, ուր խճուղին բաժանվում է՝ ուղղվելու համար դէպի Ալէքսանդրօպոլ։

Հայ հասարակութեան մի քանի մարդիկ դէս ու դէն ընկան, փող հաւաքեցին հայերից և վրացիներից, մի պսակ գնեցին և մակագրեցին «Մանգլիսի հասարակութիւնից»։ Ինչ-որ կարգադրութեամբ խանութները փակվել էին, մարդկանց անխիղճ գուրս էին արել և աջ ու ձախ ուղարկել, որ գնան և հանդիպեն հանգուցեալին։ Հասարակութիւնն էլ ցիր ու ցան գնացել էր ընդ առաջ և ոչ թէ այն տեղը, ուր սգահանդէսը պիտի սկսվէր։ Թէ հանգուցեալի տէրը և թէ կարգադրիչ յանձնաժողովը չիմացաւ, որ Մանգլիսի հասարակութեան կողմից խառն պատգամաւորութիւն է եկել։ Իսկապէս չը կար ոչինչ։ Տեղացիներից ոչ ոք, բացի ռուս և վրացի քահանաներից իրանց սարկաւագներով, հրաւիրված չէին ժամահացին։ Հրաւիրված չէր և հայ քահանան, որը իր առօրեայ հագուստով ներկայ էր սգահանդէսին։ Ինչպէս կը տեսնէ ընթերցողը, հասարակութիւնը ներկայ է եղել ըստ քմահաճութեան մի քանիսների և ոչ թէ իր ազատ գիտակցութեամբ։ Չէ կազմվել ոչ մի ժողով, ուր հասարակութիւնը ազատ կերպով վճռէր հանգուցեալին պատիւ տալու հարցը և ապա սգահանդէսին մասնակցելու մասին։ Երբ հարցը կը վճռվէր դրական կերպով, նոյն հասարակութիւնն էլ կորոշէր, երևի, ունենալ մի խառն պատգամաւորութիւն և դնել պսակ։ Շատ թէ քիչ թւով լինելը մի առանձին նշանակութիւն չունի։ Պատգամաւորութիւնը կը ներկայանար հանգուցեալի կնոջը և կարգադրիչ յանձնաժողովին արտայայտելու հասարակութեան կողմից ցաւակցութիւն և միխիթարանք, հետևապէս, կարգադրիչ յանձնաժողովը կը պատէր պատգամաւորներին ըստ պատշաճի։

Ակամայ մարդ զարմանում է, թէ ինչու տեղիս հասարակութիւնը թէ այդպիսի և թէ այլ դէպքերում իր անելիքը լաւ չէ մտածում և մի տեսակ խաղալիք է դառնում խաւարամիտ դեկավարների ձեռքին։ Թող հասարակութիւնը գիտենայ, որ իր հաւաքական խելքի արդիւնքը հազարապատիկ գովելի է, քան մի քանի անչափահաս մարդկանց արածը։ Տ. Ե.

—

Գէօրան, 25 յունիսի

Այս գիւղը, որ գտնվում է Թիֆլիս-Կարսի երկաթուղու Համամլի կայարանից 9—10 վերստ հեռաւորութեան վրա, ունի բարձր դիրք և գետեղված է Արագած սարի դիմաց։ Բնութիւնը այստեղ հրաշալի է։ Գիւղն ամբողջովին կանաչի մէջ է թաղված։

Գէօրանի շրջակայքը անտառուտ չէ. այդ պատճառով այստեղ վառելանիւթը պատրաստվում է անասունների աղբից, և դժուար կը պատահէք մի ընտանիքի, որ փայտ կամ ածուխ գործածելիս լինի վառելու համար։

Չը նայած բնութեան այնքան առողջարար պայմաններին, գէօրանցին կարծես աշխատում է իրա համար դիտմամբ այնպիսի կեանք ստեղծել, որը միանգամայն հակառակ է առողջապահական կանոններին։ Ամենից առաջ աչքի է ընկնում գիւղական կեղտոտ, անմաքուր, խոնաւ ու մութ բնակարանը. այդտեղ յատակը բնաւ տախտակած չէ, պատերն անսուաղ, սենեակները լաւ զուրկ լուսամուտներից։

Կենսական ժիերքների գներն այստեղ հետևեալ պատկերն է ներկայացնում. ձուն արժէ հատը 1 կ., իւղի ֆունտը 40 կ., վարիկը՝ 15 կ., պանրի ֆունտը՝ 13—14 կ.։ Կաթ ու մածուն մինչև յուլիսի վերջը դժուար կարելի է ճարել, որովհետև անասունները ներկայումս գտնվում են եայլաղներում, որտեղից կիջնեն օգոստոսի սկիզբներին։ Եայլաղներն այստեղից 1½ ժամվայ ճանապարհ հեռու են գտնվում։

Եղանակները շատ հով են այստեղ. գիշերները նոյնիսկ կարելի է ասել՝ ցուրտ է, իսկ ցերեկները բաւականին զով։

Համամլի կայարանի և Գէօրանի միջև սայլեր են բանում, որոնք մարդկանց և իրեղէնները փոխադրում են 1 ռուբլով։

Մակ. Զմշ.

ՄԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

—

Գանձակ, 21 յունիսի

Մեր շրջանի գիւղերի մէջ Բանանցը որպէս ամարանոց ունի մեծ յարմարութիւններ։ Բնակարանները շինված են քարից, մեծ մասամբ երկյարկանի, լուսաւոր սենեակներով։ Մաքրութիւնը այստեղ՝ համեմատած միւս գիւղերի հետ՝ գերազանցելի է։ Շրը մաքուր, կլիման առողջարար։ Աղբերը, որոնք սառցվում են աղբիւրներից, ունեն քաղցր ու սառը բնաւորութիւն։ Գիւղի սիրտը ճեղքելով, սրընթաց սահում է սառն ու վճիտ Ղօչ-Ղարա գետը, որի շնորհիւ այսօր ձգված են լայն ու ընդարձակ ծառաստաններ, այգիներ, բանջարանոցներ, որոնք ընդ միշտ ապահովում են գիւղը նիւթակապալով։ Իսկ մի քանի քայլի վրա սկսվում է դարաւոր խիտ անտառը, որի տարածութիւնը հազարաւոր վերստերի է հասնում։ Եթէ այս բոլորի վրա աւելացնենք, որ Բանանցը քաղաքից 25—30 վերստի վրա գտնվելով՝ ունի ճանապարհների մեծ յարմարութիւն նրա հետ անմիջական կապ պահպանելու համար, լիակատար է դառնում այդ ամարանոցի պատկերը։

Եւ եթէ ամենայն տարի ամառվայ սեզօնին մեծ թւով ամարանոցաւորներ է գրաւում դէպի իրան Բանանցը, այդ պարզ և հասկանալի է։

Բայց մի հանգամանք անուշադիր թողնել անկարելի է։ Վերջին տարիներս, բժիշկների ցուցմունքների համաձայն, թոքախտաւորներ և այլ հիւանդներ իրանց բնակութեան տեղ են ընտրում Բանանցը, ամառվայ ամբողջ սեզօնին. այդ հիւանդները, խառն ապրելով բնակիչների հետ, աննկատելի կերպով թոքախտի սպանիչ թոյնից բաժին են հանում վերջիններիս։

Զրկել թոքախտաւորներին Բանանցի մաքուր օդից, առողջարար կլիմայից ու քաղցրահամ ջրերից անկարող ենք, բայց տանել էլ անկարելի է, երբ կեանքեր յափշտակող թոյնից բաժին է հանվում բժշկական գիտելիքներից զուրկ բանանցեցուն, շահագործվելով նրա հաւատը և միամտութիւնը։

Բանանցեցին մի քանի ռուբլի օգտվելու համար իր բնակարանի սենեակներից մէկը վարձով տալիս է թոքախտաւոր հիւանդին, առանց քաշվելու նրանից, օգտվելով նրա հացից, ջրից, բաժակից և այլ անհրաժեշտ առարկաներից։ Իսկ այցելութիւններից, շրջվելուց, նոյնիսկ հագուստը իրանի հետ խառնելով մաքրելուց գիւղացին չէ քաշվում, հասկացողութիւն չունենալով թոյնի վարակիչ յատկութեան մասին։

Ճիշդ է, կը գտնվեն հիւանդներ, որ հնար եղածի չափ կաշխատեն հեռու մնալ առողջ հաւանից, բայց չէ՞ որ քաղաք տեղափոխվելուց յետոյ՝ թոնալից սենեակը մնում է տեղը, որից ազատօրէն օգտվում է տէրը՝ կլանելով թոքախտի սպանիչ թոյնը։

Այսպէս թէ այնպէս՝ չարիքն ակներև է և սպանիչ, որից գիւղն ընդ միշտ ազատելու համար անհրաժեշտ է ունենալ մի առանձին շէնք, որ բաղկացած լինի մի քանի սենեակներից իր բոլոր յարմարութիւնով, նրա մէջ ընդունելու բոլոր թոքախտաւորներից և այլ վարակիչ հիւանդութիւն ունեցող հիւրերին։

Այս ցանկալի նպատակը իրագործելու համար հարկաւոր չեն հարիւր հազարներ, այլ մի քանի հազար, որ շատ դիւրին կարելի է գտնել։ Բաւական է մի քանի ձեռնհաս անձինք գործի գլուխ անցնեն, հաւատացած ենք, որ ոչ ոք չի խնայի իր լուման ձգելու՝ այդ փրկարար շէնքը կառուցանելու համար։ Բացի այդ՝ գիւղացիք մեծ մասամբ որմնադիր են, և գիւղի շրջակայքը հարուստ է շինութեան նիւթերով. այս հանգամանքը ևս կարող է մեծ օգնութիւն հասցնել ցանկացված շէնքն ունենալու գործին։

Ամարանոցաւորների վրա մեծ պարտք է ընկնում անմիջապէս գործի դիմել՝ ընտրելով իրանց միջից մի յանձնաժողով, որի ջանքը պիտի լինի այժմվանից իսկ ֆօնդի մասին մտածել։ Բժշկական օգնութիւնից զուրկ, հազար ու մի հիւանդութիւնների ենթակայ գիւղացիներին հարկաւոր է օգնութիւն հասցնել և ոչ թէ ցաւի վրա ցաւ, դիակների վրա դիակ աւելացնել։ Վերջացնելով խօսքս աւելացնում եմ, որ թոքախտաւոր ամարանոցաւորները լաւ կանեն, եթէ, քաղաք տեղափոխվելիս, գաւառական բժշկի օգնութեամբ, ախտահանութեան ենթարկեն իրանց բնակված սենեակները և աշխատեն մինչև քաղաք վերադառնալը սերտ յարաբերութիւն չը պահպանել առողջների հետ, մինչև ցանկացված շէնքի կառուցումը։

Սարգս

ՍԽԱԼ ՀԱՅԵԱՑ

—

Կարդացի ես Յ. Տէր-Յարութիւնեանի «Չը կայ մեղք առանց պատճառի» յօդուածը, որտեղ պաշտպանում է քահանաների կրկնակի ամուսնութեան խնդիրը ի միջի այլոց և հասարակական շահերի տեսակէտից։

Յօդուածագիրն ասում է, որ այրի քահանան, իր մօտ ունենալով իր ծխի ընտանիքի գաղտնիքները, որովհետև նա այրի է, ի չարն է գործ դնում կնոջ հաւատարմութիւնը և շահագործում է նրան իր կենսական անհրաժեշտ բաւականութիւնների համար։

Ասածները ճշմարիտ են, որ այդպէս է լինում. միայն ճշմարիտ չէ այն, թէ նոյն ընտանեկան գաղտնի գրամները կատարվում են միմիայն այրի քահանաների և կամ թէ չէ՝ առհասարակ քահանաների միջև։

Ընտանեկան այդ գաղտնի գրամների պատճառը չէ և չէ կարող լինել միմիայն քահանայի այրիութիւնը. դա կախված է պարտի և թէ կնոջ անհատական (սուբեկտիվ) հոգեկան աշխարհի որպիսութիւնից։

Ուզում էք կրկնակի ամուսնութիւն տալ քահանաներին, տուէք, և թող ամուսնանան այն այրի քահանաները, որոնք ցանկութիւն ունեն նոր ընտանիք կազմելու, միայն մի ասէք, թէ դրանով հասարակութիւնը ազատված կը լինի ամուսնական թիւրիմացութիւններից։

Հասարակութիւնը, որի անունից այդքան շատ է խօսվում, սակայն որի իսկական շահերը այնքան քիչ են ապահովվում, չէ կարող հաւատալ, թէ քահանաների կրկնակի ամուսնութեամբ կը մաքրվի իր ընտանիքի արատը, որովհետև արատ ստեղծել կամեցողը այնուհետև էլ կը ստեղծի, և դրա առաջ չէ կարող կանգ առնել և ոչ մի արգելք։

Մի մոռանաք, որ սապատաւորին ուղղողը միմիայն գերեզմանն է լինում։

Մ. Ագեան

ԳԻՒՂԱԿԱՆ ՑԱՒԵՐԻՑ

I

Ամէն ժամանակ գիւղացի ազգաբնակութիւնը շահագործվել ու կեղեքվել է հասարակութեան մութ անձերից և դեռ էլի խաբվում է, կեղեքվում։ Տանջվելով, կաշուից դուրս գալով՝ աշխատում է ամբողջ տարին, առանց հանգստանալու, և այդ բոլորը կարծես նրա համար, որ ինքը մեայ սոված ու աղքատ, դատարկ փորով ու թշուառ. իսկ հարպիկ մարդիկ ու վաշխառուները, ինչպէս և ժողովրդի անունից մեծ-մեծ խօսող «ազգասէր» աֆերիստները ապրեն ի հաշիւ այդ ողորմելի գիւղացիների՝ փարթամ ու շքեղ։ Ցաւախ այնպիսի բաներ են կատարվում գիւղերում, որ մարդ չէ կարող հանդիստ, անվրդով նայել և չը զայրանալ։

Կան խմբակներ, տեղ-տեղ անհատներ, որոնք ամէն կերպ աշխատում, ջանքեր են գործ դնում՝ բերելու գիւղացուն խրթնագիտակցութեան և ստեղծելու նրա համար այնպիսի դրութիւն, որով նա կարողանար ապրել բարեկեցիկ կեանքով, շունչ քաշել և հոգալ իր երեխաների կրթութեան ու դաստիարակութեան մասին, հնարաւորութիւն ունենար իր արդիւնաբերութեան ու մշակման գործերը կարգի բերել և այլն։ Շատ քչերին է աջողվում այդ ուղղութեամբ մի բան ստեղծելու, այն էլ մեծ դժուարութիւններով, իսկ շատերին էլ չէ աջողվում՝ շնորհիւ գիւղացու տգիտութեան կամ գիւղի մութ այժերի և կամ թայֆայական կռիւների։ Վերջինս էլ եղել է և ժամանակի ընթացքում կը հարթվի. այս երևոյթը այն աստիճան վնասակար չէ, որքան այն, որ գիւղացոց հասցրած նիւթական վնասի հետ միասին ենթարկում է նրանց ուղղակի անբարոյականացման։

Գիւղացին թէև վշտով, բայց և այնպէս իբրև մի սովորական երևոյթի՝ ժամերի արանքով է նայում վաշխառուների և զանազան մեծ ու փոքր պաշտօնեաների հաբբստահարութեան վրա։ Նա վաղուց համոզվել է, որ դրանք բոլորն էլ ստեղծվել են իր հոգուն կրակ ու բոց լինելու և դաղելու համար։ Բայց նա բոլորովին այլ, բարձր հայեացքով ու մեծ վստահութեամբ է նայում, ինչպէս ինքն է ասում, «ուսում առածների» կամ ինտելիգենտների վրա։ Գիւղեր կան, որոնք սրբութեամբ են վերաբերվում իրանց մէջ եղած մի հատիկ ուսուցչին, մանաւանդ այն դէպքում, երբ նրա մէջ մի փոքր հասարակական ջիղ և անկաշառ ու մաքուր ընթացք է եղել դէպի գիւղական գործերը. եթէ լաւ՝ թէ վատ, շատ թէ քիչ գործ է կատարվել գիւղում, այդ շնորհիւ այն հաւատի, որ ունեցել են գիւղացիք դէպի այդ գործող անձնաւորութիւնները։

Բայց ահա այդ գեղեցիկ գործունէութեան դէմ, երբեմն, դուրս են գալիս սահմանիներ՝ դիմակաւորված ժողովրդական գործչի անունով և մեծ-մեծ տիտղոսներով՝ և մի ակնթարթում խորտակում ամէն ինչ—գործ, վստահութիւն, հաւատ, որոնք տարիների աշխատանքով ու հերոսական ջանքերով են ձեռք բերվել։ Այդ տեսակները աւելի քան վնասակար են, որովհետև բաւական է, որ գիւղացին նկատէ, թէ խաբված է իր միակ յոյսը կազմող ուսում առածներից, այլ ևս այդ շրջանում որևէ կուլտուրական գործ անելիակայելիօրէն կը դժուարանայ։ Գիւղացու ստացած այդ աննպաստ տպաւորութիւնը այնքան խոր ու վատ է ներգործում նրան, որ տարիների ջանքերը հազիւ թէ մի նոր բան կարողանան ստեղծել։

II

Անցեալ տարի Հին-Նախիջևանի շրջանի Գեազ գիւղում մի ոմն Պետրոսեան կեղծ-ժողովրդասէրի մուշտակը հագին, իր «գիտնական» գլխով և ճարտար լեզուով հաճոյանալ էր գիւղացոց, օգտվելով մօտագայ վանքի ջրից, մի ջրաղաց շինել գիւղում։ Ջրաղաց, բայց ոչ հասարակ, այլ նոր ձևի էլեկտրական մեքենայով, իբրև հասարակական սեփականութիւն, համայնական շահմարանի և ժողովրդի հաշուով։ Նա խոստացել էր էլեկտրական լուսաւորութիւն մատակարարել գիւղին, նրանց առաջ կանգնեցրել էր ապագայական պալատներ և այնպիսի չափազանցութիւնների մէջ էր ընկել, որ լսողին թւում էր, թէ մի քանի տարուց յետոյ Գեազի առաջ կը նսեմանան Պարիզն ու Լոնդօնը։ Գեազցիք միաժամանակ հաւատալով պարոնի խօսքերին՝ ժողովրդական փողերից 300 ր. յանձնում են նրան սկզբնական ծախսերի համար. պարոնը փողը ստանալուն պէս անյայտանում է՝ թողնելով գիւղացիներին քաղցը երազների մէջ։

Անցնում են ամիսներ, մի տարի, բայց ջրաղացի հոտն անգամ չը կայ. գիւղացիք մի քանի անգամ դիմում են և պահանջում կամ փողը և կամ չարաբաստիկ ջրաղացը, բայց ոչ հասարակ, այլ նոր ձևի էլեկտրական մեքենայով, իբրև համայն

◆ Կովկասի Հայոց Ուսուցչական Միութեան վարչութիւնը մեզ խնդրում է տպել հետեւեալը. «Ուսուցիչներին և հոգաբարձութիւններին զիւրութիւն տալու նպատակով, համաձայն Միութեան վերջին ընդհանուր ժողովի ցանկութեան, կազմվել է մի մարմին, որ միջնորդ է հանդիսանալու վարձվող ուսուցիչների և հրաւիրող հոգաբարձութիւնների միջև։ Վարչութեան ժամանակաւոր գրասենեակը գտնվում է Ներսիսեան դպրոցում։ Գրասենեակի հետ գործ ունեցող, օտար քաղաքներում գտնվող ուսուցիչներն ու հոգաբարձութիւնները կարող են դիմել այս հասցէով. Тифлисъ, Семинарія Нерсисянъ, Союзъ Армянскихъ Учителей. Գրասենեակը բաց է ամեն օր, ցերեկ. ժամը 10-ից մինչև 1-ը։ Թող պաշտօն որոնող ուսուցիչները շտապեն ներկայացնել իրանց ցուցակ ծառայութեանը»։

◆ Մենք ստացանք Վիենայի Մխիթարեան Միաբանութեան աբբահայր Գրիգոր արքեպիսկոպոս Գօվրիկեանից հետեւեալ քարտը. «Պարոնայք Այ. Քալանթար և Հ. Ամաքելեան. Ընդունեցէք սիրոյս և շնորհապարտութեանս հաւատիքը՝ ձեռնադրութեանս առթիւ ինձի ըրած բարեմաղթութեանցդ համար»։

◆ Ուրբաթ, յուլիսի 2-ին, Թիֆլիսի պետական բանկի գրասենեակը չի ունենայ պարապմունք, որովհետև այդ օրը նա տօնում է պետական բանկի հիմնադրութեան 50-ամեակը։ Այդ օրը ցերեկվայ ժամը 12-ին գրասենեակի շինութեան մէջ տեղի կունենայ մաղթանք, որից յետոյ կը տրվի նախաճաշ Թիֆլիսի կրուժօկում։

◆ Մեզ հաղորդում են, որ Ղարաքիլիսայի ամարային դասընթացքներում կան մեծ թիվ ուսուցիչներ, որոնցից մեծագոյն մասը եկել են պետական դպրոցներից, իսկ միայն մի երկու հոգի հայ ծխական դպրոցներից։ Նոյն երևոյթը նկատվում էր և անցեալ տարիներում։ Պետական դպրոցների ուսուցիչների մի մեծ թիւ ամառվայ ամիսներում ուսումնասիրում է նաև ուրիշ մասնագիտութիւններ Թիֆլիսի շերամապահական կայարանում և ուրիշ հաստատութիւններում։

◆ Գանձակի նահանգում հացահատիկների բերքը հետեւեալ դրութիւնն է ներկայացնում. տափարակներում հացաբոյսերը արդէն հնձում են, լեռնամասերում ցանքերը մասամբ կարկուտից վնասված են։ Ընդհանուր առմամբ աշնանացաններն ու գարնանացանները անցեալ տարվայ համեմատութեամբ պակաս չեն։ Գիւղացիական հողերից սերմանված է եղել 361,172½ դեսեատին, որից լաւ բերք է եղել 332,938½ դեսեատինի վրա։ Մասնաւոր սեփականատերերի հողերի վրա և ընդհանուր առմամբ լաւ բերք է ստացվել։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Յունիսի 28-ին, երեկոյեան ժամը 7-ին, Գօգօլեվսկայա փողոցի № 4 տնից տարվել է Միքայէլեան հիւանդանոցը ծանր կերպով հիւանդ Նիկիտա Իվանովիչ Ակսենովը, 54 տարեկան (բանւոր), որը հիւանդանոց տանելիս՝ ճանապարհին մեռել է։ Քննութիւն է կատարվում։

◆ Յունիսի լոյս 28-ի գիշերը, անյայտ չարագործներ՝ կոտրելով շուշեցի Մարտիրոս Սօլոմոնովիչ Յարութիւնեանի բնակարանի (Գեորգիեվսկի հրապար., տ. Կուտլօեվի, № 5) դրան շրջանակաձիգի տախտակը՝ մտնում են ներս, և տակն ու վրա են անում բոլոր կահ-կարասիները, անկողինները և կօմօդը, իսկ թէ ինչ են կորցնում լափշտակել՝ առայժմ անյայտ է, քանի որ բնակարանի տէր Յարութիւնեանը իր ընտանիքով ներկայումս գտնվում է Շուշում։ Այդ գողութեան մէջ կասկածվելով ձերբակալված են Կուտլօեվի աղախինը՝ օշականցի Պանար Բաղդասարեանը և վերջինիս բարեկամ Թիւրքահպատակ Սաֆար Դաւիդովիչ Աւետիսեանը, որ անգործ վարսավիր է և բնակվում է Երուսալիմսկի նրբանցքում։ Քննութիւն է կատարվում։

◆ Յունիսի 28-ին, Մուխրանսկայա փողոցի վրա, ձերբակալվել է սղնախեցի Գէորգ Այէբքանդրովիչ Միրաքեանը, որը ադմինիստրատիվ կերպով աքսորված էր գենն.-նահանգապետութեան սահմաններից և ինքնակամ վերադարձել էր Թիֆլիս։ Ձերբակալվածը պատասխանատուութեան է ենթարկվում պատժագրքի 63-րդ յօդուածով։

◆ Յունիսի 28-ին, երեկոյեան ժամը 11-ին, Բաչինի գաւառի Վէլիավի գիւղացի Սամսոն Իլիչ Կէլբակիանին, որը հացատուն ունի Թուռանօվսկայա փողոցի վրա № 28 տանը, արբած լինելով՝ Սուրբ-Սարգսի փողոցում մի ինչ-որ անյայտ մարդու հետ վէճի է բռնվում և սկսում նրա հետ կռվել։ Օտ կանգնած գտնվող Ստեփան Բաղինովը իրարից բաժանելու մտքով երբ մօտենում է կռողներին, այդ ժամանակ կէլբակիանին ճանկում է ոչ-հեռու գտնված տաբուրէտկան և դրանով խփում գտնվողներին ու նրան վայր գլորում։ Դռնապանին օգնութեան է վազում քաղաքապահ ոստիկան Գուդկովը, սակայն կէլբակիանին զգում է դէպի ոստիկանը 5 ֆունտանոց մի կշռաքար, որ դիպչում է ոստիկանի գլխին, ձախ ականջից վերև, և վերը հասցնում նրան։ Վնասվածներին հասցված է բժշկական օգնութիւն, իսկ կէլբակիանին ենթարկված է օրինական պատասխանատուութեան։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բաթում, 7 յունիսի

«Մշակի» № 117-ի Բաթումի լուրերի բաժնում իմ մասին արձանագրված տեղեկութեան առթիւ հարկ եմ համարում հրապարակական բացատրութիւն տալ։

Ահա գործակալի թուղթը.

«Անսխ 30-ին, 8—9 ազգայիններն ստորագրութեամբ, ստացայ մի բողոքագիր յետագայ բովանդակութեամբ. «Սրանով ուշադրութիւն ենք խնդրում անցեալներում տեղ պատահած մի տխուր դէպքի իրականութեան վերաբերմամբ, որը կարծում ենք որոշ չափով հասարակական ընոյթ է կրում ու ընդհանուր հայ հասարակութեան կրօնական պահանջներն ու զգացմունքն է գրգռում։ Մայիսի 15-ին բաբերդցի ոմն Արսէն անունով վախճանվում է տեղիս քաղաքային հիւանդանոցում, որի մասին յայտնվում է տէր-Կարապետ Մալխասեանին։ Երկու օր վերջը, 17-ին, երկուշաբթի օր, մի քանի հայրենակիցներ, վերցնելով դիակը հիւանդանոցից ժամը 4-ին, համաձայն տիրացու Գալուստ Զիպուխեանի խօսքին, տեղափոխում են գերեզմանատուն՝ յանձնելու հողին։ Ճանապարհին պատահում է տէր-Կարապետ Մալխասեանը, որը մի ուրիշ թաղումից կառքով վերադառնում էր քաղաք։ Հայրենակիցներս խնդրում ենք քահանայից յետ դառնալ և հողին յանձնել նաև մեր մեռելին։ Սակայն տէր-հայրը չուզից մի փոքր նեղութիւն կրել, առարկեց թէ՝ «ես արդեն հողի վրա կարգը կատարել եմ, տարէք ու թաղէք». այս ասելով հեռացաւ։ Այժմ մենք խնդրում ենք պատասխանել և բաւարարել մեր կրօնական վիրաւորված զգացմունքները, թէ արդեօք ընդունելի է մեր օրէնքում առանց դիակի ներկայութեան լոկ հողի վրա կարգ կատարելով թաղել մեռելը, և կատարած լինել ննջեցեալի վերաբերմամբ կրօնական բոլոր ծէսերն ու պարտականութիւնները, և եթէ այդ օրինական է, ապա ուրեմն տէր-հայրը թող բարեհաճի մեզ ցոյց տալ, թէ երբևիցէ եղել է նման մի դէպք և կամ երբ, ինչ պարագաների տակ ու որտեղ։ Իսկ եթէ ոչ, տէր-հօր վարմունքը մենք ապօրինի ու պախարակելի գտնելով, խնդրում ենք դատապարտել նրա այդօրինակ վարմունքը ու բաւարարել մեզ». «Բոլորագրութեամբ հասուցանելով բողոքագրի բովանդակութիւնը ձեր բարեկրօնութեանը, խնդրում եմ կարելոյն չափ փութով հաճել տալ ձեր ստուգապատում բացատրութիւնները տեղի ունեցած դէպքի և ձեր դէմ ուղղված բողոքների մասին»։

Այս թուղթն ուղարկել է ինձ գործակալը մայիսի 31-ին։

Նախքան եղելութիւնը պատմելը հարկ անհրաժեշտ է բացատրել, որ երբ Բաթումի քաղ. հիւանդանոցում անտէր ննջեցեալներ են լինում և ոչ ոք չէ յանձն առնում ննջեցեալի թաղման ծախսերն հոգալ, այդպիսի դէպքերում քաղաքն ինքն է հոգում կարերը ծախսերը և թաղել է տալիս անտէր ննջեցեալին՝ վերջինիս դատաւորութեան հոգևորականի ձեռամբ։ Հայ ննջեցեալների վերաբերմամբ այպէս է լինում. հիւանդանոցի կապալառուն բերում է սահմանված գումարը և ոստիկանութեան թուղթը, որ ննջեցեալին թաղելու արգելք չը կայ, և ապա հայ քահանան կարգադրում է թաղման ժամանակը և թաղումը կատարում։

Վերոյիշեալ դէպքը տեղի է ունեցել այսպէս։ Անցեալ մայիսի 17-ին քաղ. հիւանդանոցի կապալառուն մի ննջեցեալի թաղման թոյլատրութիւնը բերեց ինձ և վճարեց սահմանված 3 ր. 50 կ. թաղման ծախսը։ Տիրացու Գալուստին պատուիրեցի, որ դրօգ ուղարկէ հիւանդանոց ննջեցեալը գերեզմանոց տանելու համար (անտէր ննջեցեալների համար սովորաբար այպէս է լինում), միևնոյն ժամանակ որոշեցի, որ դրօգապանն այնպէս պիտի շարժվի, որ ննջեցեալը ժ. 1—2-ին լինի գերեզմանոցում. տիրացուն ինձ ասաց, որ ննջեցեալի հայրենակիցներից ոմանք (բաբերդցիք) կամենում են թաղմանը ներկայ լինել. պատասխանեցի տիրացուին, որ նրանց էլ իմացնէ մեր որոշած ժամանակը։ Ժամը 2 ին տիրացուի հետ գնում եմ գերեզմանոց, սակայն ննջեցեալը դեռ բերված չէր. այնտեղ պատահում եմ երկու բաբերդցու, որոնցից մէկը ննջեցեալի անեղբայր էր, իսկ միւսը համագիւղացին. սրանք մեր նշանակած ժամանակին եկել էին գերեզմանոց. սպասում ենք մի ժամ, երկու ժամ, սակայն ննջեցեալը չը կայ. մինչև ժամը 5-ը սպասելով և տեսնելով, որ ննջեցեալը դեռ բերված չէ, սկսում եմ թաղման տան կարգը կատարել երկու բաբերդցիների ներկայութեամբ. տան կարգը վերջացնելով սկսում եմ գերեզմանոցի կարգն էլ կատարել. ննջեցեալի վրա ածվելիք օրհնած հողն էլ առանձին եմ դնել տալիս և պատուիրում գերեզմանափորին, որ ննջեցեալը գերեզման իջեցնելուց յետոյ օրհնած հողն ածէ և ապա ծածկէ գերեզմանը։ Այսպէս վարվելուս պատճառն այն էր, որ ես չէի կարող երկար ժամերով սպասել գերեզմանոցում և բացակայել քաղաքից, որովհետև օրինակատարութեանց հերթը իմը լինելով՝ յանկարծ կարող էին ինձ հիւանդի հաղորդութեան հրաւիրել, անխուսափելի մկրտութեան կանչել և այլն. ճիշդ է, միաբանակիցս քաղաքումն էր, սակայն հերթը նրանը չը լինելով և նա իրան ազատ զգալով՝ կարող էր տանը պատրաստ չը գտնվել իմ բացակայութեան ժամանակ օրինակատարութեանց գնալու. վերոյիշեալ հանգամանքն ի նկատի ունենալով՝ նա մանաւանդ ի նկատի ունենալով, որ թաղման կարգը կատարվում է ննջեցեալի հոգու համար, այլ ոչ դիակի, թաղման կարգը կատարեցի առանց դիակի ներկայութեան։ (Հազարաւոր գերեզմաններ ենք օրհնում, որոնք ուրիշ տեղեր են գտնվում, կամ նոյն իսկ այսօր գոյութիւն չունեն)։ Կարգը կատարելուց յետոյ կառք եմ նստում տիրացուի հետ և վերադառնում. 5—6 րօպէ յետոյ պատահում եմ դրօգապանի, որ բերում էր ննջեցեալին, և նրա հետ 5—6 հոգու. իմ հարցին՝ թէ «ժամը 2-ին ննջեցեալը պիտի լինէր գերեզմանոց, ինչու այսքան ուշացար», — դրօգապանը պատասխանեց, թէ «հիւանդանոցի ծառան այնտեղ չէր, մինչև եկաւ, ուշը մնացի»։ Թէև պատասխանն անբաւարար էր և անհի մն, — վերջը իմացայ, որ նա շատ ուշ է գնացել ննջեցեալին բերելու, որպէսզի ուրիշ պատահած գործերը ձեռքից չը փախցնէ, — սակայն եղածն եղել էր և ուշացել. ուստի ասացի, որ «ես արդէն կարգը կատարել եմ, տարէք թաղեցէք»։ Ուղեկցող բաբերդցիները ոչ մի խօսք չասացին, ոչ մի դժգոհութիւն չը յայտնեցին, այլ ընդհակառակը զուարճախօսութիւններ ունենալու սանկցիան։ Ուրեմն աշխատել դրանց ժամասէր շինել կամ վախենալ, որ նրանք օտար եկեղեցու ծոց կը նետվեն, բոլորովին աւելորդ է և միանգամայն անժուութիւն։

Մեր թէ գիտակից և թէ անգիտակից հասարակութիւնը երբէք չէ դատապարտել եկեղեցու պաշտօնեաների այն վարմունքը, երբ վերջիններս ձանձրացուցիչ ընթերցուածները փառաւորապէս կրճատում էին և չէ հայհոյել կամ քրիստոնէութեան թշնամի համարել գիւղական այն քահանային, որ աշխատանքի օրերին միայն կիրակի օր է աղօթողներին եկեղեցի հրաւիրում և կամ ամբողջ ժամասացութիւնը համարեա թէ մի խաչակնքելով վերջացնում։ Ժողովուրդը առանց տրտնջալու տանում է այդ նորամուծութիւնը, բայց զարմանալին այն է, որ ուղում է նա անպատճառ օրէնք դարձած տեսնել։

Մեր եկեղեցին դեռ այն օրին չէ հասել, որ ամբողջ ազգութեան հոգատարութեան առարկան դառնայ, քանի որ կրթական գործը, կեանքի անապահովութիւնը, տնտեսական քայքայված դրութիւնը, մասաւոր այլասերումը աւերակների նման սպասում են վերաշինվելու, կենդանանալու, բուժվելու։ Ոյժ ունէք, այդ ասպարէզում գործադրեցէք, որով իսկապէս կարող էք հային կորստեան ճանապարհէց ազատել, թէ չէ «յոյս, յարութիւն» «յոյս յարութեան» փոխելով, այնքան երկար ամենօրեայ ժամասացութեան ներկայ եղող անդործունէութեան մատնված փոքրիկ խմբի մասին մտածելով, կամ եկեղեցու պաշտօնեաների նոր զգեստ, կեանքի նոր ընկեր տալով, հաւատացէք որ, ազգութեան ոչ մի օգուտ տուած չէք լինի, մեր կեանքը բարեփոխած չէք լինի, այն կեանքը, որի դեկը ժողովրդի ձեռքին է միայն, որից և պէտք է սկսել բարեփոխումը։

Աւ. Տէր-Յարութիւնեան

Նոր-Նախիջևան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱ ԲԻՒՐԴՍՏԱՆԻՑ

Բ. գիւղ, 2 յունիսի

Կարճամանակեայ առ երևոյթ դադարից յետոյ Բիւրդստանի յուզումները նորից վերսկսվեցին այս անգամ աւելի մեծ թափով։ Գրում եմ կարգով։

Մեր նոր կառավարութիւնը՝ յանձին Թաւրիզի անջոմանի՝ այս անգամ աւելի փութկոտութիւն ցոյց տուեց, մի բան՝ որ միշտ տխուր բացառութիւն էր կազմում մեր հին կառավարութեան պատմութեան տխրագոյն էջերում։ Խրատված այն բազմաթիւ փորձերից, որ Բիւրդստանի ամենաթեթև շարժումն իսկ միշտ թանգ է նստել կառավարութեան նիհար քսակի վրա, իշխանութիւնն աճապարեց առաջն առնել այն բոլոր պատահարների, որոնք առաջ պիտի գային հոգ ցեղապետների՝ դէմօքրիների և բէկզադէների՝ ընդհարումից և երկու կրօնապետների՝ Ղազի-Ֆաթթահի և մուֆթիի միջև լարված դրութիւնից։

Ստանալով այդ սպառնական լուրերը՝ մի շաբաթվայ ընթացքում Սօուջ-Բուլաղ հասաւ մի հարիւրեակ՝ յեղափոխական «քարդամիլլի» ձիաւոր զօրամասից՝ ոմն Վլսուգուս-Սալթանէի հրամանատարութեամբ։ Այդ զօրամասի ներկայութիւնը Բիւրդստանի սահմաններում, պէտք է խոստովանած, իր սկզբնական տպաւորութիւնը թողեց և լարված յարաբերութիւնների թափը ժամանակաւորապէս կանգնեցրեց։ Յեղափոխականֆէդայիների արտաքինը, նրանց հագուստն ու զինաւորումը, պայթուցիկ ռումբերի անուշնը գրաւեց ընդհանրապէս Բիւրդստանի և մասնաւորապէս կուսի պատրաստված ոյժերի ուշադրութիւնը, և այդ նոր երևոյթի հանդէպ մի տեսակ շփոթութիւն առաջ եկաւ. քիւրդերի ապշութիւնը կատարեալ եղաւ մանաւանդ հետեւեալ դէպքից։

Քաղաքում ինչ-որ մի ձիու վաճառման պատճառով ընդհարում ծագեց երկու ֆէդայիների և տեղական Թիւրքահպատակների միջև. սկզբում ֆէդայիներն իրանց շատ կօրեկտ պահեցին. նրանք միայն արդարութիւն էին պահանջում. իսկ Թիւրքահպատակները յոխորտալով՝ դաշունամերկ՝ յարձակում գործեցին ֆէդայիների վրա, որոնք այլ ևս չը կարողանալով տանել այդ յանդգնութիւնը՝ տեղն ու տեղը գնդակահարեցին մէկին և վիրաւորելով մի երկու հոգու ստիպեցին փախչել։ Դէպքը, ի հարկէ, հեռագրվեց Թաւրիզ, որի հետեւանքը եղաւ Վլսուգ-ուս-Սալթանէի պաշտօնանկութիւնը միայն (շահզադէ Իմամ-Ղուլի միրզան արդէն իր ապիկարութեան պատճառով պաշտօնանկ էր եղել և դատաւորութեան տեղապահութիւնը ժամանակաւորապէս յանձնված էր Վլսուգ-ուս-Սալթանէին)։

Այդ բացառիկ փաստը — օրը ցերեկով սպանել մի Թիւրքահպատակի, վիրաւորել երկուսին և դարձեալ ազատ կերպով շրջել Սօուջ-Բուլաղի փողոցներում — իր զօրեղ ազդեցութիւնը թողեց քիւրդերի վրա մանաւանդ այն դէպքում, երբ օսմ. կառավարութիւնը այս անգամ անուշադիր գտնվեց դէպի այդ «օգտակար» խնդիրը...

Բայց, աւաղ, ինչպէս ակնշտ, այս անգամ էլ սկսված գործը խեղդվեց հէնց իր սկզբնական սաղմի մէջ։ Դրամի պակասութիւնը, այդ ահռելի ուրուականը, որը որպէս մի դամոկլեան սուր միշտ կախված է Իրանի առաջադիմութեան և զարգացման ճանապարհի շեմքի ճակատից, այս անգամ էլ կատարեց իր տխուր դերը... Յեղափոխականները, չը ստանալով իրանց որոշեալ ամսավճարը և նեղվելով անհրաժեշտ ծախսերից, սկսեցին թալանել և հետզհետէ հեռանալ քաղաքից։

Թէ այդ դասալքութիւնը և թէ նոր դատաւորի գալու ձգձգումը խրախուսեց քիւրդերին, որոնք նորից սկսեցին շարժվել և վերադառնալ նախկին ձեռնարկութեանց ու ծրագրված ուղղութեան։

Շատ ուշ անցեալի խառնակութիւնները այժմս աւելի ուժեղ թափով հրապարակ են նետված. դրութիւնը վտանգաւոր է և կրիտիկական. սարսափելի պատահարները այժմ դարձել են ամենօրեայ սովորական երևոյթներ, և մենք ամեն օր ականատես ենք աբիւնալի կռիւների, սպանման, կողոպտման, աւերման և բռնի սեփականացման։

Խուրշիդ

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ԲԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ԿՈՏՈՂԱԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառային երթևեկութիւն)

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ՝ մարդատար № 12 գնացքը՝ 2 ժ. 38 ր. գիշերվայ., Գանձակ է հասնում 9 ժ. 9 ր. երեկ., Եւլախ՝ 11 ժ. 20 ր գիշերվայ, Հաջի-Կարալ՝ 4 ժ. 16 ր. գիշ., Բալաքորի՝ 8 ժ. 1 ր. առաւօտ., Բագու՝ 8 ժ. 48 ր. առաւ.։ Ընդ № 2 գնացքը՝ 8 ժ. 15 ր. առաւ., Գանձակ է հասնում 1 ժ. 28 ր. ցերեկ., Եւլախ՝ 3 ժ. 6 ր. ցերեկ., Հաջի-Կամալ՝ 7 ժ. 15 ր. երեկ., Բալաքորի՝ 10 ժ. 8 ր. գիշ., Բագու՝ 10 ժ. 53 ր. գիշ.։ Պօստատար № 4 գնացքը՝ 10 ժ. 4 ր. գիշ., Գանձակ է հասնում 4 ժ. 18 ր. գիշ., Եւլախ՝ 6 ժ. 26 ր. առաւ., Հաջի-Կարալ՝ 11 ժ. 23 ր. առաւ., Բալաքորի՝ 3 ժ. 13 ր. ցերեկ., Բագու՝ 4 ժ. 45 ր. ցերեկ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ պօստատար № 71/75 12 ժ. 22 ր. գիշ., Ալէքսանդրոպոլ է հասնում 11 ժ. 21 ր. առ., Էջմիածին կայար.՝ 4 ժ. 49 ր. ցերեկ., Նախիջևան՝ 10 ժ. 51 ր. գիշ., Ջուլֆա՝ 12 ժ. 29 ր. գիշ.։ Ընդանրատարդատար՝ 4 ժ. 15 ր. ցերեկ., Ալէքսանդրոպոլ է հասնում 3 ժ. 10 ր. գիշ., Էջմիածին՝ 8 ժ. 38 ր. առաւօտեան, Երեւան՝ 10 ժ. 9 ր. առ.. և սրանից դէպը այլեւս չէ գնում։

ԲԱԹՈՒՄ՝ մարդատար № 5՝ 7 ժ. 31 ր. երեկ., Միխայլօվօ է հասնում 11 ժ. 45 ր. գիշ., Բաթում՝ 9 ժ. 30 ր. առաւ.։ Պօստատար № 3՝ 12 ժ. 24 ր. ցերեկ., Միխայլօվօ է հասնում 5 ժ. 47 ր. երեկ., Բաթում՝ 3 ժ. 25 ր. գիշ.։ Ընդ № 1 գնացքը՝ 10 ժ. 36 ր. գիշ., Միխայլօվօ է հասնում 2 ժ. 39 ր. գիշ., Բաթում՝ 10 ժ. 49 ր. առաւօտեան։

ԲՕՐԺՈՄ՝ մարդատար № 7/8 8 ժ. 28 ր. առ., Միխայլօվօ է հասնում 12 ժ. 42 ր. ցերեկ., Բօրժոմ՝ 2 ժ. 3 ր. ցերեկ.։ Մարդատար № 9/10 3 ժ. 36 ր. ցերեկ., Միխայլօվօ է հասնում 7 ժ. 56 ր. երեկ., Բօրժոմ՝ 9 ժ. 13 ր. գիշերվայ.

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒՄԻՑ՝ պօստատար № 3՝ 12 ժ. 24 ր. ցերեկ.։ Ընդ № 1 գնացքը՝ 10 ժ. 36 ր. գիշ.։ Մարդատար № 11՝ 6 ժ. 58 ր. առ. (այս գնացքը Բաթում չէ գնում)։

ԲԱԹՈՒՄԻՑ՝ տրադ № 2 գնացքը՝ 7 ժ. 25 ր. առաւ.։ Պօստատար № 4՝ 9 ժ. 4 ր. երեկ.։ Մարդատար № 6՝ 11 ժ. 4 ր. առ. (այս գնացքը Բագու չէ գնում)։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ՝ պօստատար № 72/73՝ 6 ժ. 8 ր. առաւ.։ Մարդատարապրանքատար՝ 6 ժ. 33 ր. երեկոյան։

ԲՕՐԺՈՄԻՑ՝ մարդատար № 9/10 8 ժ. 8 ր. երեկ.։ Մարդատար № 7/8 6 ժ. 28 ր. առաւ.

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳԻԳԵԱՆ
Աչքի հիւանդութիւններ
Ընդունելութիւնը ամեն օր
Առաւօտեան ժամը 10—1
Երեկոյեան ժամը 5—7
Վելիամինովսկայա փող № 8
(օ. մ.) 564. 100—18

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Զարջօյի հայոց դպրոցի համար ◆ հարկաւոր են ◆
ՈՒՍՈՒՑԻՉ ներսիսեանական կամ ճեմարանական, և ՎԱՐԺՈՒՀԻ — գիմնազիական։ Ուսուցիչը կը ստանայ 600 ր. ռոճիկ, վարժուհին՝ 400 ր.։ Ուսուցիչը պիտի տան և կիրակի օրերին մանանգէ ժամերգութեան, որի համար կը ստանայ 150 ր. արդիւնք։ Ցանկացողները կարող են դիմել՝ Чарджуй, Попечительству армянской школы.
(օ. մ.) 768. 3—3

Եկատերինօդարի հայոց դպրոցի համար
ՀԱՐԿԱՒՈՐ Է
ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ
27 դասով և 800 ր. ռոճիկով։ Աւանդելու է հայոց լեզու, թուաբանութիւն, հայոց պատմութիւն, բնագիտութիւն (2 դ.) և ընդհ. աշխարհագրութիւն (2 դ.)։
Ցանկացողները դիմեն Հոգաբարձութեան։
(ա. օ.) 782. 5—3

ԵԴԵՍԻԱՅԻ
ս. Սաստուածածայր եկեղեցու համար
հարկաւոր է
քահանայ կամ քահանայացու
միջնակարգ կրթութեամբ։ Գիւղն ունի 700 տուն։ Ստանձնող քահանան կունենայ 350 տուն և 700—1000 ր. եկամուտ։ Ցանկացողները անյապաղ թող ներկայացնեն իրանց մասին տեղեկութիւններ և վկայականներ հետեւեալ հասցէով. Моздокъ. Черезъ Канову, въ м. Эдиссію (Терс. обл.) Армянскому Попечительству.
Ի դիմաց հոգաբարձութեան՝
Յովակիմ Միրանեան

Типографія „Экономія“ Большая Ванкская № 3.